

Չանգվածային լրատվության առցանց միջոցներում սեռի ընտրության թեմայի մշտադիտարկում

Ծրագիրն իրականացնողներ.

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն,
Արմավիրի զարգացման կենտրոն,
Մարտունու կանանց համայնքային խորհուրդ
Սեյվ դը Չիլդրեն (ՄԴՉ) Ինթերնեյշնլ

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական
միության աջակցությամբ: Բովանդակության համար
պատասխանատվություն է կրում Մարդկային զարգացման
միջազգային կենտրոնը, և այն որևէ ձևով չի
արտահայտում Եվրոպական միության տեսակետները:

© Մարդկային զարգացման միջազգային կենտրոն, 2016



Բովանդակություն

Չանգվածային լրատվության առցանց միջոցներում սեռի ընտրության թեմայի մշտադիտարկում	1
Բովանդակություն	2
Երախտիքի խոսք	3
Նախաբան	5
Ամփոփում	6
Շրջանակման տեսական հենքն ու ՉԼՄ-ներում խոսույթի քննադատական վերլուծությունը	10
Հայաստանում պտղի սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների շրջանակումը.....	13
<i>Սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների քննարկման վերլուծությունը ՉԼՄ-ներում</i>	14
<i>Տվյալների բազաների ընտրություն և պտղի սեռի ընտրության մասին հողվածների կողմավորում</i>	15
Արդյունքների քննարկում	16
Կանխակալության և խեղաթյուրման դրսևորումները այս կամ այն սեռի ներկայացուցիչներին նկարագրելիս.....	22
<i>Ապահով դիրք գրավելը. սեռական պատկանելիության հիմքով գերազանցության գաղափարախոսության և սեռական պատկանելիության հիմքով կարծրատիպային պատկերացումների ձևերը</i>	25
Եզրակացություն	28
Առաջարկություններ	29
Գրականություն	32
Հավելված 1. Մոնիտորինգի ընթացքում կիրառված հարցերը	34
Հավելված 2. Լրագրողների ցանկ	36

Երախտիքի խոսք

Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը իր խորին երախտագիտությունն է հայտնում բոլոր նրանց, ովքեր աջակցել են Եվրոպական հանձնաժողովի ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Հայաստանում պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագրի շրջանակներում ՉԼՄ-ների մշտադիտարկման խմբին: Շնորհակալ ենք մշտադիտարկման ողջ ընթացքում նրանց ոգևորիչ մասնակցության, անգնահատելի կառուցողական քննադատության և ընկերական խորհուրդների համար: Երախտապարտ ենք մշտադիտարկման հետ կապված մի շարք հարցերի վերաբերյալ հստակ ձևակերպված և խորաթափանց հեռանկարներով կիսվելու նրանց պատրաստակամության համար:

Ցանկանում ենք մեր խորին երախտագիտությունը հայտնել Եվրոպական հանձնաժողովին, որը մեզ ընձեռել է սույն մշտադիտարկումն իրականացնելու հնարավորությունը: Հատուկ շնորհակալություն ենք հայտնում Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, Արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. պրն. Պյոտր Սվիտալսկուն: Գենդերային հավասարության և զարգացման ոլորտում Հայաստանի կառավարությանը և քաղաքացիական հասարակությանը նրա անմիջական և եռանդուն աջակցությունը նպաստել է ծրագրի և մասնավորապես՝ մշտադիտարկման համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը և այս խնդիրները որպես գերակայություն ճանաչելու գործին: Ծրագրի իրականացման ողջ ընթացքում նշանակալի աջակցություն են ցուցաբերել Եվրոպական միության պատվիրակությունը և հատկապես՝ պատվիրակության Համագործակցության բաժնի և ծրագրերի կառավարման գծով մասնագետները՝ ապահովելով ուղղորդում և ծրագրային գործողությունների, այդ թվում՝ հետազոտական խմբի աշխատանքի անխափան կատարումը:

ՉԼՄ-ների մշտադիտարկման համար ոգեշնչման աղբյուր է հանդիսացել գենդերային առումով հավասարակշռված լրատվության խթանման, հայաստանյան հասարակության մեջ աղջիկների արժեքների և պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման գործում հայաստանյան տարբեր լրատվամիջոցների և բազմաթիվ լրագրողների, թղթակիցների և խմբագիրների հաստատակամությունն ու եռանդուն ջանքերը: Անցած տարիների ընթացքում նրանց հետևողական և նվիրված աշխատանքի շնորհիվ հնարավոր դարձավ իրականացնել այս հետազոտությունը և կենտրոնանալ Հայաստանում պտղի սեռի խտրական ընտրության հանգեցնող գենդերային խտրականության հարցերի վրա:

Ցանկանում ենք շնորհակալություն հայտնել նաև այն լրատվամիջոցներին, որոնք մեզ ընձեռել են իրենց առցանց լրատվական ռեսուրսներից և տվյալների բազաներից անխափան օգտվելու հնարավորություն: Խորին շնորհակալություն ենք հայտնում հետևյալ լրատվական հարթակները կառավարող մասնագետներին՝ Panarmenian.net, Panorama.am, Aravot.am, Tert.am, Mediamax.am, Yerkir.am, 168.am, Hetq.am, Civilnet.am, Galatv.am, Hraparak.am, 1in.am, Lragir.am, News.am և Times.am:

Մեր երախտագիտությունն ենք հայտնում նաև «ԱՊՌԱ Պրոդաքշն» ՍՊԸ-ին, որի որակյալ աշխատանքի շնորհիվ ապահովվել է համեմատաբար կարճ ժամանակահատվածում մեծ թվով էլեկտրոնային լրատվամիջոցների ներկայացուցչական ընտրանքից նախորդ երեք տարիների տվյալների ծավալուն հավաքագրումը՝ գնահատման մեթոդները և տեխնոլոգիաները, մասնավորապես՝ որոնման գործիքները և ընթերցումը համադրելու միջոցով: ՉԼՄ-ների մշտադիտարկման լավագույն միջազգային չափանիշներին համապատասխանող նրանց քանակական և որակական մեթոդաբանական գործիքների միջոցով մշակվել է արժանահավատ ապացույցների բազա՝ այս ոլորտում քաղաքականության հետագա հետազոտությունների համար: Ցանկանում ենք շնորհակալություն հայտնել համագործակցության և սույն զեկույցի պատրաստման գործում մեծ ներդրում ունենալու համար: Շնորհակալություն ենք հայտնում նաև մշտադիտարկող խմբին և անձամբ տկն. Ռոզի Մխիթարյանին իր մասնագիտական մոտեցման և մշտադիտարկման գործընթացում մեծ ներդրում ունենալու համար:

Սույն զեկույցի պատրաստման, ինչպես նաև կառավարության, քաղաքացիական հասարակության և լրատվամիջոցների տարբեր դերակատարներին հստակ առաջարկությունների ներկայացման գործում Էական դերակատարում է ունեցել որակական և քանակական տվյալների վերլուծությունը: Խորին երախտագիտություն ենք հայտնում փորձագետ տկն. Նվարդ Մանապանին՝

մշտադիտարկման գործընթացը ղեկավարելու, մշտադիտարկող խմբին մեթոդաբանական ցուցումների և մշտադիտարկման արդյունքներն ու վերլուծությունը սույն զեկույցում ամփոփելու համար: Խնդրին նրա համապարփակ մոտեցման շնորհիվ ապահովվել է մանրագնին անդրադարձ լրատվական նյութերում խտրականության բացառմանը, գենդերային հավասարության խնդիրներին և բազմազանությանը: Չեկույցի պատրաստման ողջ ընթացքում ՄՉՄԿ աշխատակազմը բովանդակալից բազմաթիվ քննարկումներ է ունեցել տկն. Մանասյանի և մշտադիտարկում իրականացնող խմբի հետ:

Ցանկանում ենք մեր խորին երախտագիտությունը հայտնել անձանց, ում շնորհիվ հնարավոր է դարձել պատրաստել այս զեկույցը՝ ՀՀ ԱՍՀՆ Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության Կանանց հիմնահարցերի բաժնի պետ տկն Արմինե Թանաշյանին, ՀՀ ԱՆ Մայրական և վերարտադրողական առողջության պահպանման բաժնի պետ տկն Գայանե Ավագյանին, ՀՀ ԱՍՀՆ Ժողովրդագրության բաժնի պետ պրն Վանիկ Բաբաջանյանին, Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի սոցիալական աջակցության բաժնի պետ պրոֆ. Արմինե Մխիթարյանին, ՀՀ Ոստիկանության Անչափահասների իրավունքների պաշտպանության և ընտանեկան բռնության դեմ պայքարի վարչության ավագ տեսուչ, ոստիկանության մայոր Լուսինե Խաչատրյանին, ՀՀ Ազգային ժողովի Առողջապահության, մայրության և մանկության հարցերի մշտական հանձնաժողովի փորձագետ տկն Անուշ Սուքիասյանին, ՀՀ Ազգային ժողովի Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի փորձագետ պրն Մհեր Արշակյանին, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի (ՄԱԲՀ) հայաստանյան գրասենյակի Հաղորդակցության գծով օգնական պրն Մհեր Մանուկյանին, ԵՊՀ-ի Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի տնօրեն գիտությունների թեկնածու Գոհար Շահնազարյանին, ԵՊՀ-ի Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի Արտաքին և հասարակայնության հետ կապերի համակարգող տկն Սիրան Հովհաննիսյանին, ՀՀ Հանրային խորհրդի Գենդերային հարցերով հանձնաժողովի նախագահ տկն Անահիտ Աղոյանին, Կանանց իրավունքների կենտրոնից տկն Սուսաննա Հայրապետյանին, 168.am «168 ժամ» թերթից տկն Օֆելյա Հովհաննիսյանին, Tert.am-ից տկն Նելլի Լազարյանին, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի գիտությունների թեկնածու Համլետ Սարգսյանին և «Պահապան» զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն տկն Ինգա Մանուկյանին քաղաքականության մասին քննարկումներին ունեցած ներդրումի, անգնահատելի գաղափարների և ողջամիտ դիտողությունների համար:

Շնորհակալություն ենք հայտնում նաև մեր ծրագրի գործընկերներին՝ «Սթիթչինգ Սեյվ դը Չիլդրեն Նեդերլանդ» (ՄԴՉ Նիդերլանդներ) կազմակերպությանը, «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ին (ԱՉԿ), «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ-ին (ՄԿՀԽ) և «Սեյվ դը Չիլդրեն (ՄԴՉ) Ինթերնեյշնլ» կազմակերպությանը: Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում տկն Ռուզաննա Մեյանին (ՄԴՉ), տկն Սուսաննա Մկրտչյանին (ՄԴՉ), տկն Անահիտ Գևորգյանին (ՄԿՀԽ), տկն Նաիրա Առաքելյանին (ԱՉԿ) և տկն Անի Թովմասյանին (ԱՉԿ) իրենց ներդրման, շարունակական օգնության և աջակցության համար:

Նախարան

1. «Ես մի բան գիտեմ՝ այսօրվա դրությամբ «մայր» հասկացողությունը բոլոր տղամարդկանց համար սրբություն է, և չեմ կարծում, որ որևէ մեկը թույլատրի նման հայեցողություններ...», մեջբերում է Հայաստանում պտղի սեռի խտրական ընտրության մասին առցանց լրատվական նյութերի մշտադիտարկման շրջանակներում հետադարձ կարգով հետազոտված էլեկտրոնային լրատվամիջոցներից մեկը: Թեև այսօրվա դրությամբ ոչ ոք չի կարողացել ներկայացնել այդ պնդումները հաստատող որևէ ապացույց, լրագրողն ընտրել է այս մեջբերումը՝ չնայած նրան, որ տվյալ նորությունը վերաբերել է Վոլեյբոլի ֆեդերացիայում նոր նշանակման շուրջ ծավալված վիճաբանությանը: Հաճախակի են այն դեպքերը, երբ կարծրատիպեր պարունակող ոչ վերաբերելի մեջբերումները հայտնվում են լրագրերի առաջին էջերում և նոր կյանք ստանում՝ հասարակության շրջանում վերարտադրվելու միջոցով:
2. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման ՄԱԿ-ի կոմիտեի կողմից վերջերս բարձրացված մտահոգություններից է եղել «...ընտանիքում և հասարակության մեջ կանանց և տղամարդկանց դերերի և պարտականությունների վերաբերյալ խտրական կարծրատիպերի առկայությունը, որոնք խաթարում են կանանց սոցիալական կարգավիճակը և նրանց կրթական և մասնագիտական կարիերան»: Կոմիտեն հայտարարել է նաև իրեն հայտնի դարձած այն փաստի մասին, որ. «նման կարծրատիպերը և կանանց՝ արժանապատվությունը նվաստացնող պատկերացումները փոխանցվում են դասագրքերով և պատշաճ մշտադիտարկման չենթարկվող ՉԼՄ-ներով»: Ի թիվս հարցերի՝ Կոմիտեն կոչ է արել «վերացնել գենդերային կարծրատիպերը և ապահովել, որպեսզի ՉԼՄ-ները խթանեն կանանց՝ որպես սոցիալական, տնտեսական և քաղաքական կյանքի ակտիվ մասնակիցների դրական կերպարները»:
3. Սույն համառոտագրի նպատակն է եղել վերլուծել մշտադիտարկված էլեկտրոնային լրատվամիջոցների նյութերը, որոնք լուսաբանել են պտղի սեռի խտրական ընտրության թեման, և ընդհանուր առմամբ կանանց և աղջիկների արժևորմանը վերաբերող հոդվածները: Մանրակրկիտ ուսումնասիրվել է էլեկտրոնային լրատվամիջոցների նյութերի բովանդակությունը՝ կանանց կամ տղամարդկանց վերաբերյալ ոչ ճշմարտացի, խեղաթյուրված կամ կանխակալ պնդումները կամ հաղորդումները բացահայտելու համար: Կատարվել է այս բոլոր հարցերի առանձին-առանձին վերլուծություն, չափագրում, ինչպես նաև առանձնացում, ինչը թույլ է տվել վերլուծել լրատվամիջոցի կողմից դիտավորությամբ կամ առանց դիտավորության կարծրատիպային լուսաբանման մակարդակը, որը հանգեցրել է հասարակության մեջ շրջանառվող կանխակալ մտքերի ազատ ներթափանցմանը ներս՝ վերահաստատելով առկա իրավիճակը:
4. Չեկույցում քննարկվող եզրակացություններում վերհանվել են խնդրո առարկա լրատվամիջոցների ուժեղ և թույլ կողմերը և առաջարկվել քաղաքականության միջոցառումներ՝ ի վնաս որևէ սոցիալական խմբի գործող ոչ դիտավորյալ շրջանակման լրատվամիջոցներ ներթափանցումը կանխելու և շահագրգիռ կողմերին հասարակությանը հուզող թեմաների լուսաբանումը հնարավորինս առավել ճշգրիտ և հավաստի ձևով նախատեսելու հնարավորություն ընձեռելու համար:

Ամփոփում

5. Իրականությունը որպես այդպիսին օբյեկտիվորեն անճանաչելի է: Այն հանրային բանակցության առարկա է, որն իմաստավորվում է որոշակի իմաստակիր նշանների շուրջ մարդկանց հարաբերությունների ձևավորման ու հաղորդակցության արդյունքում: Չետևաբար, հանրային ճանաչելի իրականության կառուցման գործում շրջանակումը առանցքային է, քանի որ թույլ է տալիս ձևավորել աշխարհընկալման տեսանկյունները: Այն, ըստ էության, ենթադրում է *ընտրություն և շեշտադրում*, այսինքն՝ ընկալված իրականության որոշակի հատվածների ընտրություն և հաղորդակցության մեջ դրանց շեշտադրում՝ միտված ինչ-որ հատվածների խնդրականացմանը, պատճառահետևանքային մեկնաբանությանը, բարոյական գնահատականների ձևավորմանը և (կամ) որոշակի լուծումների առաջադրմանը:
6. Շրջանակներն ու շրջանակումը ՉԼՄ-ներում առանցքային կարևորություն ունեն՝ ա) մարդու իրավունքները և հիմնարար ազատություններն իրացնելու հնարավորությունների համար միջավայրի ապահովման, բ) առկա հանրային անհավասար հարաբերությունների (օրինակ՝ քաղաքական, մշակութային, դասակարգային, էթնիկ, գենդերային և այլն) ժողովրդավարական հասարակությանը ներհատուկ (վերա)բանակցման մեխանիզմների երաշխավորման և գ) հանրային բարիքի (վերա)բաշխմանը հավասար մասնակցության, առանձին խմբերի կողմից հեղինակության մենաշնորհման ու իշխանության շարունակական կենտրոնացման բացառման տեսանկյունից: Չետևաբար, ՉԼՄ-ներում արտացոլված շրջանակներն ու շրջանակման արտապատկերումը որպես խոսույթի քննադատական վերլուծության հենք կարող են բացահայտել ՉԼՄ-ների՝ իշխանության (վեր)արտադրման միջավայր և/կամ սուբյեկտ լինելու աստիճանը:
7. Յայաստանում սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների մասին ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հետազոտությունն՝ իր մտահոգիչ արդյունքներով, շրջանակման նոր առիթ հանդիսացավ: Վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ առաջին և երկրորդ երեխայի դեպքում նորածին տղաների ու աղջիկների հարաբերակցությունը մոտ էր կենսաբանորեն նախասահմանված ցուցանիշին, որը, սակայն, երրորդ և չորրորդ երեխաների դեպքում 1.04-1.07 նորմալ շեմից զգալիորեն տարբերվում էր, և յուրաքանչյուր 100 աղջկան բաժին էր ընկնում 160 և 170 նորածին տղա: Ընդհանուր առմամբ, Յայաստանում հարաբերակցության միջին ցուցանիշը 114.5 էր: Այս ցուցանիշներով Յայաստանը համեմատելի էր պտղի սեռի խտրական ընտրության ամենամեծ ցուցանիշն ունեցող երկրների հետ: Չեկոյցի պատրաստման ընթացքում մեծ տարբերություններ են արձանագրվել նաև աշխարհագրական առումով, ընդ որում՝ որոշ մարզերում, օրինակ՝ Շիրակում և Գեղարքունիքում, արձանագրվել են պտղի սեռի խտրական ընտրության ավելի մեծ ցուցանիշներ: Այս միջին ցուցանիշներով Յայաստանը երրորդն է Չինաստանից (118) և Ադրբեջանից (116.5) հետո: Ի թիվս այլ հիմնավորումների՝ Յայաստանում տղա երեխայի նախապատվությունը կարող է հանդիսանալ խորքային մշակութային շրջանակում, որը կանանց ու աղջիկների համեմատաբար ավելի ցածր դերի մասին է խոսում և որպես սոցիալական խումբ՝ նրանց ավելի խոցելի դարձնելով կարծրատիպերի և խտրականության դրսևորման հետևանքով:
8. Չեկոյցի հրապարակումից անմիջապես հետո մեկնարկած և 2013-2016թթ. ընթացքում հիմնական լրատվամիջոցների կիզակետում հայտնված սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների վերաբերյալ խոսույթի շրջանակներում ՉԼՄ-ներում ինստիտուցիոնալ մակարդակով շրջանակման գործընթացը դիտարկելու միջոցով կարելի է ուսումնասիրել առկա շրջանակումները և շրջանակման գործընթացը՝ պարզելու համար, թե որքանով են կանայք ու աղջիկները հնարավորություն ունեցել մասնակցելու տղա երեխայի նախապատվության և պտղի սեռի ընտրության շրջանակումը վերանայելու գործընթացին: Այդ վերլուծությունը նաև թույլ է տվել վերհանել կանանց ու աղջիկների արժևորման վրա ազդող ՉԼՄ-ներում արտապատկերված շրջանակումները: Սույն հետազոտության իրականացման նպատակով էլեկտրոնային լրատվամիջոցների ընտրության հիմքում ընկած է եղել ամենամեծ ծածկույթ ունենալու առանձնահատկությունը: Տվյալների բազայում ընդգրկվել են 2013-2016թթ. ընթացքում հրապարակված բոլոր հոդվածները:

9. Ընտրված 15 էլեկտրոնային լրատվամիջոցների ուսումնասիրության արդյունքում առանձնացվել է հետազոտության ժամանակահատվածում հրապարակված, ընդհանուր առմամբ, 894 հոդված՝ դրանք հետագայում տվյալների բազայում ընդգրկելու նպատակով: Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների մասին հոդվածների նշանակալի մասը՝ 46 տոկոսը, լույս է տեսել 2014 թվականին, և այդ թեման լուսաբանվել է հետազոտության մեջ ընդգրկված բոլոր տարիների բոլոր ամիսների ընթացքում: Շրջանակման տեսանկյունից հետաքրքիր էր հասկանալ, թե ինչպես են հենց լրատվամիջոցները ներկայացնում պտղի սեռի ընտրության թեման: Ինչ վերաբերում է պտղի սեռի ընտրությանը, հայաստանյան հասարակությունը տեղյակ չի եղել խնդրի մասին նախքան ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի գեկույցում արդյունքների ներկայացումը:
10. Լրատվամիջոցների կողմից Հայաստանում պտղի սեռի ընտրության խնդրի լուսաբանման շրջանակումը, ընդհանուր առմամբ, կրել է դրական բնույթ: Շատ հազվադեպ են արձանագրվել որևէ լրատվական հոդվածի հետ առնչվող բացասական շրջանակումներ: 86 տոկոս են կազմել այն դեպքերը, երբ պտղի սեռի ընտրության, սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների, ծնելիության, տղա երեխայի նախընտրության (ՍԸ-ԱԸ-ԾՆ-ՏՆ) թեմաները լուսաբանելիս լրատվամիջոցները և լրագրողները պահպանել են հավասարակշռված և ոչ սենսացիոն լրատվության սկզբունքները: Ինչպես հեղինակային, այնպես էլ ընտրողաբար կրճատված վերատպված հոդվածներում լրագրողները մեծամասամբ խնդիրը ներկայացրել են դրական լուսաբանմամբ:
11. Հավասարակշռված և ոչ սենսացիոն լրատվության սկզբունքի պահպանման գրեթե կեսից ավելի դեպքերում լրագրողները և լրատվամիջոցները որոշել են միայն վերհանել պտղի սեռի ընտրության, պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների և տղա երեխայի նախապատվության խնդիրը: Նշված սկզբունքի պահպանման մյուս դեպքերում փորձ է արվել նաև ստեղծել հանրային ֆորում՝ տվյալ խնդիրը և դրա հիմքում ընկած պատճառները հասկանալու համար: Չարմանալի չէ, որ մի քանի լրագրողական հետաքննությունների պարագայում պտղի սեռի ընտրության, պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների և տղա երեխայի նախապատվության խնդիրները լուսաբանող լրագրողները և ՉԼՄ-ները պաշտպանել են այս կամ այն կողմը: ՉԼՄ-ներից դուրս գործող դերակատարների կողմից առաջարկվող շրջանակումները և խնդիրը լուսաբանող լրագրողների անհատական նախասիրությունները, ըստ էության, կարող էին մեծապես հանգեցնել խնդրի միակողմանի, սակայն, դրական լուսաբանմանը:
12. Հետաքրքրական էր, որ ուսումնասիրված լրատվական հոդվածների մեծ մասում ներկայացվել է հարցի միայն մեկ կողմը, և միաժամանակ փորձ է արվել պահպանել հավասարակշռված և ոչ սենսացիոն լրատվության սկզբունքները: Դա հիմնականում դրսևորվել է պտղի սեռի ընտրության, պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների և տղա երեխայի նախապատվության ոլորտում նախնական գիտելիք և (կամ) այդ հարցի շուրջ հստակ դիրքորոշում ունեցող այս կամ այն մասնագետի հայտարարությունների մեծաքանակ մեջբերումներով: Լրագրողները հազվադեպ են հակադրվել պաշտոնատար անձանց տրամադրած տվյալներին և պնդումներին նրանց հարցեր ուղղելու կամ փաստերի ստուգում կատարելու միջոցով: Այլ շահագրգիռ կողմերի պնդումների հավաստիությունը մեծամասամբ չի ստուգվել և վիճելի հարցերի պատասխանները պարզելու նպատակով լրացուցիչ հարցեր չեն բարձրացվել:
13. Այս թեմայով լրատվական նյութերում հղիության արհեստական ընդհատումների իրավունքի կողմնակիցների կամ հակառակորդների կարծիքները, թերևս, չեն ներկայացվել: Սույն ուսումնասիրության համար ընտրված էլեկտրոնային լրատվամիջոցների լրագրողներն իսկապես փորձել են լուսաբանել շրջանակված խնդիրը, որը, ըստ երևույթին, անակնկալի է բերել շահագրգիռ կողմերին: Խնդիրը լուսաբանելու ողջ ընթացքում նրանք փորձել են հնարավորինս պահպանել հավասարակշռված և ոչ սենսացիոն լրատվության սկզբունքները: Սակայն, այդ սկզբունքները պահպանելով հանդերձ՝ լրագրողները հազվադեպ են կասկածի տակ դրել իրենց ներկայացված պնդումները, և նրանց շրջանում նկատվում էր հակընդդեմ դիրքորոշում ունեցող անձանց անտեսելու որոշակի միտում:
14. Դեպքերի մեծ մասում պտղի սեռի ընտրության և պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների խնդիրների ակտիվ քննարկման արդյունքում՝ ազգային

անվտանգության և ժողովրդագրական հաշվեկշռի տեսանկյունից պտղի սեռի ընտրության գործելակերպի հնարավոր ռիսկերի վերաբերյալ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի ուսումնասիրությունից բխող շրջանակումն ընդլայնվել է: Լրատվական հոդվածների ընդհանուր վերլուծությունից պարզ է դարձել, որ լրագրողները հիմնականում հետամուտ են եղել տվյալ խնդրի մասնագիտական քննարկմանը և շատ դեպքերում խուսափել են պտղի սեռի ընտրության խնդրի բավականին վիճելի կողմերի, օրինակ՝ կարծրատիպերի և հիմնարար իրավունքի, այն է՝ ընտրության իրավունքի ավելի մանրագնին ուսումնասիրությունից: Ակնհայտ էր, որ հղիության արհեստական ընդհատման խնդրի քննարկման ժամանակ լրագրողները դժվարացել են տարբերակել վերարտադրողական ընտրության դեպքերը խտրականության հստակ դրսևորումների դեպքերից:

15. Հողվածների մշտադիտարկման ընթացքում մանրագնին ուսումնասիրվել է Էլեկտրոնային լրատվամիջոցների նյութերի բովանդակությունը՝ կանանց կամ տղամարդկանց վերաբերյալ ոչ ճշմարտացի, խեղաթուրված կամ կանխակալ պնդումներ կամ հաղորդումներ բացահայտելու նպատակով: Կատարվել է այս բոլոր հարցերի առանձին-առանձին վերլուծություն, չափագրում, ինչպես նաև առանձնացում, ինչը թույլ է տվել վերլուծել լրատվամիջոցի կողմից դիտավորությամբ կամ առանց դիտավորության կարծրատիպային լուսաբանման մակարդակը, որը հանգեցրել է հասարակության մեջ շրջանառվող կանխակալ մտքերի ազատ ներթափանցմանը ներս՝ վերահաստատելով առկա իրավիճակը: Ընդհանուր առմամբ, Էլեկտրոնային լրատվամիջոցների հոդվածները կանանց կամ տղամարդկանց վերաբերյալ կանխակալ պնդումներ չեն պարունակել: Բացի այդ, արձանագրվել են հղիության արհեստական ընդհատման դիմած կանանց քննադատության շատ քիչ դեպքեր:
16. Լրագրողների հիմնական պարտականություններից մեկը պետք է լինի սեռական պատկանելիությանը, ազգությանը, արտաքին տեսքին, տարիքին և սեռական կողմնորոշմանը վերաբերող «կլիշեների» գործածումից զերծ մնալը, ինչի նկատմամբ պետք է վերահսկողություն իրականացնեն լրատվամիջոցները: Կարծրատիպերի և գենդերային հիմքով ձևակերպված բառակապակցությունների մեծ մասը ներթափանցել են ուսումնասիրված նյութերի մեջ լրագրողների կողմից տարբեր շահագրգիռ կողմերի ուղղակի խոսքը մեջբերելու կամ վերարտադրելու միջոցով: Տեքստերի կառուցվածքի ուսումնասիրության ընթացքում նկատվել են մի շարք բավականին ակնհայտ հարցեր, որոնք քննարկման առարկա դարձնելու կարիք չկա: Առաջին, շատ դեպքերում շահագրգիռ կողմի ասածը մեջբերելու կարիք չկար, քանի որ այն նյութի այլոժեի զարգացմանը որևէ կերպ չի նպաստել: Երկրորդ, խիստ կարծրատիպային պնդումները հաճախ գետնդրվել են տեքստում չակերտների մեջ, ինչը արվել է կա՛մ ոչ կանխամտածված, կա՛մ էլ ավելի ապահով դիրք գրավելու փորձի արդյունքում: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ նման նյութերի մեջ պարունակվող կարծրատիպերի և գենդերային հիմքով ձևակերպված բառակապակցությունների թիվը եղել է խիստ սահմանափակ, և փոխարենը՝ դրանք շատ տարածված են եղել այլոց խոսքի մեջ, այդ վարքագիծը կարելի է, թերևս, վստահորեն որակել որպես լրագրողների կողմից «ավելի ապահով դիրք գրավելու փորձ»: Երրորդ, հանդիպել են մի շարք գենդերային հիմքով ձևակերպված բառեր և բառակապակցություններ, որոնցից առավել տարածվածներն են՝ «հայ կին» և «տղամարդկային»՝ որոնք նշում են որևէ գործողություն կամ հատկանիշ, և որոնց վերլուծությունից պարզ է դառնում, որ դրանք՝ որպես բառեր հայերենում գենդերային պատկանելիության կոնկրետ ցուցիչի նշանակություն չեն ունեցել, այլ ձեռք են բերել այն այլոց խոսքի հաճախակի գործածման և վերափմաստավորման հետևանքով:
17. ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի գեկույցում Հայաստանում տվյալ խնդրի առկայության շրջանակմանը հաջորդած երեք ու կես տարվա ողջ ընթացքում ընտրված Էլեկտրոնային լրատվամիջոցներում քննարկվել են պտղի սեռի ընտրության, պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների և տղա երեխայի նախապատվության խնդիրները: Լրագրողների կողմից լուսաբանվող քննարկումները մեծամասամբ կրել են բավական դրական և չեզոք բնույթ: Խնդրի բացասական շրջանակմամբ հոդվածների մասնաբաժինը բավականին փոքր էր: Այս իրավիճակը կարող էր պայմանավորված լինել հետևյալ գործոններով՝ ա) լրագրողների մեծամասնությունը կանայք են, բ) խնդրի ձևակերպումը որպես ոչ միայն սեռական պատկանելության հիմքով երեխային կյանքից զրկելու՝ մարդու իրավունքներին առնչվող խնդիր, այլև՝ որպես ազգային նշանակության խնդիր, և գ) այն

փաստը, որ տվյալ խնդրի կիզակետում երեխան է: Թեև խնդիրը վերհանելուց բացի՝ լրատվամիջոցները ներկայացրել են նաև դրա հնարավոր լուծումները, տարբերակները դիտարկելու նկատմամբ բավականին պահպանողական մոտեցման պատճառով հնարավոր լուծումների թվում գերակշռել են վերարտադրողական առողջապահության ծառայությունների մատուցման ընթացակարգի խստացմանն ուղղված լուծումները, ինչի արդյունքում անտեսվել են ավելի ծավալուն լուծման տարբերակները, որոնց թվում կարող է լինել գենդերային պատկանելիությանն առնչվող կարծրատիպային ակնկալիքների կարգավորումը և խորապես արմատավորված մշակութային իմաստների փոփոխությունը:

18. Ընտրված էլեկտրոնային լրատվամիջոցների վերլուծությունից պարզ է դառնում, որ ինստիտուցիոնալ և անհատական մակարդակներում անհրաժեշտ է ձեռնարկել պետական քաղաքականության մի շարք համապատասխան գործողություններ և միջամտություններ, օրինակ՝ ա) մշակել քաղաքականության փոփոխությունների կարիք ունեցող ոլորտներում հանրային կարծիք ձևավորողների հետ աշխատելու ռազմավարություններ, բ) զարգացնել հանրային կարծիքի ձևավորման գործում առաջատար դերակատարների՝ քաղաքականության փոփոխությանը միտված ազդեցիկ հիմնավորումները ձևակերպելու կարողությունը, գ) կազմակերպել տեղեկատվական արշավ պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների վերաբերյալ, դ) կազմել պտղի սեռի ընտրության թեման լուսաբանած լրատվամիջոցների անհատական նկարագրերը՝ հետազայում նրանց լուսաբանման գործելակերպի և ոճերի բարելավմանն աջակցելու նպատակով, ե) մշակել իրավական կարգավորումներ, որոնց համաձայն լրատվամիջոցները պարտավոր են ունենալ որակի վերահսկողության ներքին մեխանիզմներ, զ) մշակել առաքելության հետ կապված ռազմավարություններ և լրագրողների համար նախատեսված մանրամասն ուղեցույցներ, Ե) աջակցել այլ կազմակերպությունների կողմից կազմակերպված դասընթացներին զուգահեռ լրագրողների և լրատվամիջոցների համար նախատեսված աշխատանքին զուգընթաց վերապատրաստման և կարողությունների զարգացման ներքին դասընթացների անցկացմանը, ը) լրատվամիջոցների համար մշակել որակի վերահսկողության ներքին մեխանիզմներ, թ) մշակել ոճի մասին ձեռնարկի և էթիկայի ուղեցույցների շարունակական թարմացման և օգտագործման մեխանիզմ, ժ) բուհերի կողմից լրագրողների համար նախատեսված կրթական ծրագրերի բարեփոխում և հավատարմագրում:

Շրջանակման տեսական հենքն ու ՉԼՄ-ներում խոսույթի քննադատական վերլուծությունը

19. Իրականությունը որպես այդպիսին օբյեկտիվորեն անճանաչելի է: Այն հանրային բանակցության առարկա է, որը իմաստավորվում է որոշակի իմաստակիր նշանների շուրջ մարդկանց հարաբերությունների ձևավորման ու հաղորդակցության արդյունքում: Օբյեկտիվ իրականության փոխարեն կոնստրուկտիվիստական մոտեցման հիմքում ընկած է այն պնդումը, որ մարդկային գործողությունները դրդված են առարկաների ու առարկայական իրականության մասին մտքում ունեցած պատկերներից ու դրանց տրված իմաստների փոխհարաբերությունից (Lippmann, 1922): Յետևաբար, ցանկացած միջոց, որը գործ ունի իմաստների ձևավորման և դրանք ձևավորող խմբերի հարաբերությունների արտացոլման ու շրջանակման հետ, մասնակցում է ճանաչելի իրականության կառուցմանը՝ հաստատելով և/կամ վերահաստատելով իմաստների որոշակի համակարգեր:
20. Շրջանակումը որպես մեթոդաբանություն հաճախ գործածվող հարացուցային միջոց է, որը թույլ է տալիս վերլուծել հանրության կողմից շրջանավոր մտքերը և տարբեր լսարանների վերաբերմունքները (Hallahan, 1999): Այն գործածվում է ուսումնասիրելու համար հաղորդակցությունն ու դրանով պայմանավորված վարքագծային օրինաչափությունները (Rendahl, 1995), որտեղ առանցքային դերակատարություն ունեն գանգվածային լրատվության միջոցները նյութերի ընտրության, դրանց մատուցման ձևի ու բովանդակության նկատմամբ կիրառված չափանիշների, լրագրողների անհատական ընկալումների ու հանրային առկա արժեքանությունների հավասարակշռման մեխանիզմների փոխգործակցության ու փոխազդեցության տեսանկյունից:
21. Շրջանակումը հետևաբար հանրային ճանաչելի իրականության կառուցման գործում առանցքային է, քանի որ թույլ է տալիս ձևավորել աշխարհընկալման տեսանկյունները (Hallahan, 1999): Այն ըստ էության ենթադրում է ընտրություն և շեշտադրում. ընկալված իրականության որոշակի հատվածների ընտրություն և հաղորդակցության մեջ դրանց շեշտադրում միտված ինչ-որ հատվածների խնդրականացմանը, պատճառահետևանքային մեկնաբանությանը, բարոյական գնահատականների ձևավորմանը ու/կամ որոշակի լուծումների առաջադրմանը (Entman, 1993): Յետևաբար, գանգվածային լրատվության միջոցների ուսումնասիրությունը, որպես իմաստների կառուցման միջավայր ու գործող ինստիտուցիոնալ սուբյեկտ դրան մասնակցող անձանց՝ լրագրողների ու այլ շահակից խմբերի ու անհատների տեսանկյունից ճանաչելի իրականության կառուցման գործում առանցքային կարևորություն ունի:
22. Շրջանակներն ու շրջանակումը ՉԼՄ-ներում առանցքային կարևորություն ունեն մարդու իրավունքների իրացման տեսանկյունից դրանց հնարավորությունների միջավայրի ապահովման, առկա հանրային անհավասար հարաբերությունների (օրինակ՝ քաղաքական, մշակութային, դասակարգային, էթնիկ, ռասայական կամ գենդերային) ժողովրդավարական հասարակությանը ներհատուկ (վերա)բանակցման մեխանիզմների երաշխավորման, հանրային բարիքի (վերա)բաշխմանը հավասար մասնակցության, առանձին խմբերի կողմից հեղինակության մենաշնորհման ու իշխանության շարունակական կենտրոնացման բացառման տեսանկյունից: Յետևաբար ՉԼՄ-ներում արտացոլված շրջանակներն ու շրջանակման արտապատկերումը որպես խոսույթի քննադատական վերլուծության հենք կարող են բացահայտել ՉԼՄ-ների իշխանության (վեր)արտադրման միջավայր և/կամ սուբյեկտ լինելու աստիճանը՝ պայմանավորված վերջինիս ներգործուն կամ ներգործվող լինելով:
23. Շրջանակման դիտարկումը խոսույթի քննադատական վերլուծության տեսական հենքի համադրմամբ խաչում է շրջանակման որպես գործընթացի վրա ներազդող խորթին հարաբերությունները այդ շրջանակների որպես սահմանման գործում ներազդող սուբյեկտների ազդեցություն ու գերներկայություն: Այս տեսանկյունից դոմինացիայի ու խոսույթի միջև կապի սահմանումը կենտրոնական տեղ է զբաղեցնում (Van Dijk, 1993): Խոսույթի վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել անհավասար ներազդեցության արդյունքում անհավասարության վերարտադրումն ու դրա կառուցվածքը (Van Dijk, 1993):

Այս իմաստով ՉԼՄ-ները այն ինստիտուցիոնալ սուբյեկտներն են, որտեղ արտացոլված է տվյալ հանրության համար իրականության գոյացմանը միտված խոսույթը՝ դրա վրա ներագրող, դրանից ներագրվող սուբյեկտների բարդ հարաբերությունների ու որոշակի մեթոդաբանությամբ արտապատկերման արդյունքում:

24. Սուբյեկտների կամ սոցիալական խմբերի կողմից գերակա դիրքի պահպանման համար կարևոր է ռեսուրսներին, ինչպիսիք են օրինակ՝ եկամուտը, սոցիալական դիրքը, հարստությունը, կրթությունը կամ գիտելիքը, այդ թվում նաև տեղեկատվությունը ու հետևաբար իմաստների ձևավորման գործընթացում հաղորդակցության միջոցների և/կամ սուբյեկտների հասանելիության արտոնյալ պայմանների հաստատումը (Van Dijk, 1993): Գերակա դիրքի ու իշխանության վերահաստատման համար այլ սոցիալական խմբերի վրա տվյալ խմբի կողմից հսկողության սահմանումը կարևոր նախապայման է հանդիսանում: Գերակայություն ունեցող սոցիալական խմբի համար այլոց ազատության սահմանափակումը այլ գործողությունների շարքում ենթադրում է նաև մտքի վրա մեծապես ներագրելու կարողություն: Հետևաբար, իշխանության հաստատման արդյունավետ ու ժամանակակից մեթոդը առավելապես ճանաչողական՝ համոզելու, շահարկելու ու անգամ կեղծելու միջոցով այլոց մտափոխելուն միտված, հետևաբար խմբային շահի սպասարկմանն ուղղված մտքի կառավարման գործառնություն է ենթադրում (Van Dijk, 1993):
25. Խոսույթի քննադատական վերլուծության հենքով շրջանակման դիտարկումը ՉԼՄ-ներում կարող է որոշակի ճշտությամբ արտացոլել տվյալ հանրության մեջ ներագրող սոցիալական խմբերին, ինչպես նաև վերհանել ՉԼՄ-ի որպես հարթակի ներգործվող և/կամ սոցիալական խմբի ներգործուն դերը: Այդ նպատակով հետազոտության շրջանակներում և ՉԼՄ-ներում խոսույթի դիտարկման ընթացքում առանձնացվել են շրջանակման մակրո՝ հանրային ու համազգային, միջին՝ ինստիտուցիոնալ ու միկրո՝ անհատական մակարդակները: Շրջանակների մակրոմակարդակը գործ ունի խորքային մշակութային իմաստների (Bacchi, 2009) հետ, ազդելով շրջանակման գործընթացի վրա խոսույթային հնարավոր տիրույթի սահմանման միջոցով (Ferree & Gamson, 2002), որից դուրս դժվար է պատկերացնել հաջողված ու հասանելի շրջանակումը կամ իմաստների ձևավորումը: Սա այն մակարդակն է, որում գործում են բոլոր սոցիալական խմբերը և ստիպված են հաշվի նստել այդ հնարավոր տիրույթի սահմանափակումների հետ: Այստեղ ներագրող խմբերի նպատակադրումները ստորադասվում են ու շրջանակվում են մշակույթով պայմանավորված այդ համատեքստում տվյալ ժամանակում ընկալելի իմաստների բազմությամբ:
26. Միջին՝ ինստիտուցիոնալ մակարդակում շրջանակման դիտարկումը գործ ունի որոշակի կազմակերպական կառուցվածք ունեցող սոցիալական խմբի կողմից իմաստների ձևավորման գործընթացի նկատմամբ կիրառվող միտումնավոր գործողությունների կամ ընդունելի որոշումների հետ, որոնք պարտադիր կամ նախընտրելի են գործադրման համար (Dombos et al, 2009): Դրանց պարտադիր կամ նախընտրելի լինելը հնարավորինության տիրույթում իմաստների ձևավորման առումով ունի ճանաչողական ու նորմատիվ բաղադրիչներ (Dombos et al, 2009): Հանրության շրջանում տարբեր սոցիալական խմբերի կողմից շրջանառվող գերակա խոսույթների արտացոլումը որպես ինստիտուցիոնալ մակարդակում պայմանավորված գործընթաց հնարավորություն է տալիս ընտրություն կատարել ու ռազմավարական մոտեցում ցուցաբերել դրանց արտացոլման նկատմամբ (Dombos et al, 2009): Այդ տեսանկյունից ՉԼՄ-ներում առկա որոշակի չափանիշների գործածման աստիճանը կարող է որպես խոսույթի սուբյեկտ գատել ռազմավարական մոտեցում ցուցաբերած ու իմաստների ձևավորման գործում միտումնավոր մոտեցում որդեգրած միջոցներին այլ՝ հարթակ հանդիսացող ու ոչ միտումնավոր ու նաև այլ սոցիալական խմբերի կողմից այս կամ այն չափով շահարկվող ու հարթակ հանդիսացող առարկայացած կազմակերպական կառուցվածք ունեցող ՉԼՄ-ներից: Խոսույթի վրա գերակա ու արտոնյալ ներագրեցության, այդ իմաստով նաև սոցիալական իշխանության կենտրոնացման ու անհավասարության (վերա)հաստատման կանխման տեսանկյունից շատ կարևոր է առանձնացնել այն ՉԼՄ-ները, որոնք խոսույթի նկատմամբ գործադրում են շրջանակման ճանաչողական ու նորմատիվ ռազմավարական մոտեցումներ և հնարավորություն են ստեղծում մշակութային խորը իմաստների հնարավորինության սահմաններում ներկայացնել մրցակցող խոսույթներն ու դրանց ներկայացնող առկա սոցիալական խմբերին:

27. Ռազմավարական մոտեցումների ամկայությունը միջին մակարդակում նաև կարևոր է միկրո՝ անհատական մակարդակի միտումնավոր իմաստաստեղծ գործողությունների ազդեցությունը չեզոքացնելու տեսանկյունից: Անհատական մակարդակի շրջանակման միտումնավոր գործողությունները ենթադրում են տվյալ հանրային և/կամ ինստիտուցիոնալ մակարդակի հնարավորին ու պայմանավորված շրջանակումների հարաբերակցության հատույթում անձնական միտումնավոր որոշումների արդյունքում մասնակցել իմաստների ձևավորմանը՝ անձնապես ընտրելով առկա մրցակցող շրջանակների միջև՝ այս անգամ ևս պայմանավորելով դա ճանաչողական ու նորմատիվ գործառույթներով (Dombos et al, 2009): Այլ կերպ ասած՝ միջին մակարդակի դերակատարի ճանաչողական ռազմավարության առումով իրազեկված լինելու աստիճանից կախված՝ միկրո մակարդակի դերակատարը, օրինակ՝ լրագրողը, կարող է կամա թե ակամա միջամտել խոսույթի շրջանակմանը՝ դրանով իսկ մարմնավորելով տվյալ ՉԼՄ-ն: Մշակութային խորը իմաստների հետ առնչվող մակրո մակարդակը և իմաստային իրականության վերաբանակցման գործընթացին անհատական ընտրության միջամտություն ենթադրող միկրո մակարդակը սույն հետազոտության շրջանակներում չեն դիտարկվում:
28. Մակրո մակարդակն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է ամնվազն համեմատել միևնույն թեման բննարկող երկու տիրույթ, որոնք, սակայն, ունեն խիստ տարբեր մշակութային իմաստներ, օրինակ՝ հղիության արհեստական ընդհատումների դեմ առարկելու արմատացած ավանդույթով մշակույթները, որոնց խոսույթի ուսումնասիրության արդյունքում այդ տարբերությունները կբացահայտվեն: Մակրո մակարդակը սույն հետազոտության շրջանակներում չի դիտարկվում: Ինչ վերաբերում է միկրո մակարդակի ուսումնասիրությանը, թեև հավաքագրված տվյալները թույլ են տվել դիտարկել միևնույն թեմայի շրջանակներում առանձնացվող հարցերի ընտրության նկատմամբ անհատ լրագրողի հակումները և իմաստը փոխանցելու համար կիրառված ռազմավարությունները, այդ մակարդակը սույն հետազոտության շրջանակներում չի դիտարկվում և կարող է ուսումնասիրվել հետագայում համապատասխան հետազոտության շրջանակներում: Փոխարենը, ռազմավարական տեսանկյունից որոշվել է կենտրոնանալ միջին մակարդակի վրա և վերհանել շրջանակման գործընթացում ճանաչողական և նորմատիվ ինստիտուցիոնալ չափանիշների դիտավորյալ կիրառման մակարդակը, քանի որ դրա միջոցով հնարավոր կլիներ վերհանել միկրո մակարդակի միջամտության թերությունները և առաջարկել լրացուցիչ հետազոտություն՝ միաժամանակ կարճաժամկետ հեռանկարում ենթադրելով, որ խորապես արմատավորված մշակութային իմաստների փոփոխության համար երկար ժամանակ է պահանջվում, և այսպիսով սույն հետազոտության շրջանակներում դրանք համարվում են անփոփոխ:
29. Միջին մակարդակում ռազմավարական շրջանակման պարտադիր կամ նախընտրելի մասնակիցների համար ոչ հասանելի գործընթացի պայմաններում հնարավոր են տարբեր ելքեր: Առաջին, ՉԼՄ-ն որպես ներգործուն սուբյեկտ կազմակերպական թույլ արտահայտված շրջանակման կանոնների պայմաններում կարող է լրագրողին առավել մեծ ազատությամբ հնարավորություն տալ ներբեռնելու անհատական կամ թվացյալ անհատական ճանաչողական ու նորմատիվ որոշակի շրջանակումներ առանց միտումի կամ միտումնավոր՝ նպաստելով այս կամ այն սոցիալական խմբի համար հաղորդակցությանն ու իմաստների ձևավորմանը արտոնյալ հասանելիության հաստատմանն ու անհավասարության խորացմանը: Երկրորդ, թույլ արտահայտված կանոնների պայմաններում անհատական շրջանակումների գործընթացը կարող է վերահսկվել ու կառավարվել այս կամ այն սոցիալական խմբի կողմից, որն ունի արտոնյալ կարգավիճակ կամ ձգտում է դրան: Երրորդ, թույլ արտահայտված կազմակերպական կանոնների պայմաններում այս կամ այն սոցիալական խմբի շահերից բխող ճանաչողական ու նորմատիվ շրջանակումների գործընթացը կարող է միջին մակարդակի շրջանակումը տեղափոխել մշակութային հնարավորինության այս կամ այն թեմատիկ տիրույթ, որը հաճախ դրսևորվում է միջին մակարդակում գրավիչ շրջանակումների՝ օրակարգի սահմանման տեսքով: Չորրորդ, անհատական շրջանակման տեսանկյունից լրագրողները կարող են առանց միտման կամ միտումով անհամաչափորեն արտացոլել այս կամ այն սոցիալական խմբի ճանաչողական ու նորմատիվ շրջանակումները: Առաջին տարբերակից այն տարբերվում է իր՝ տվյալ դեպքում ոչ չեզոք լինելու հանգամանքով: Այսպիսով, միջին մակարդակում խոսույթի կառուցվածքի

ուսումնասիրության միջոցով, ըստ էության, կարելի է բացահայտել մակրո մակարդակում առկա անհամապատասխանությունների՝ միկրո մակարդակում դիտավորյալ կամ ոչ դիտավորյալ գործողությունների միջոցով հանրային խոսույթ փոխանցվելու բավականին մեծ թվով հնարավոր ռիսկերը:

Հայաստանում պտղի սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների շրջանակումը

30. Հայաստանում պտղի սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների մասին ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հետազոտությունն՝ իր մտահոգիչ արդյունքներով, շրջանակման նոր առիթ հանդիսացավ: Վերլուծության որդեգրած մեթոդաբանության արդյունքում վիճակագրական տվյալների համադրությամբ պարզվեց, որ առաջին և երկրորդ երեխայի դեպքում նորածին տղաների ու աղջիկների հարաբերակցությունը մոտ էր կենսաբանորեն նախասահմանված ցուցանիշին, որը, սակայն, երրորդ և չորրորդ երեխաների դեպքում 1.04-1.07 նորմալ շեմից զգալիորեն տարբերվում էր, և յուրաքանչյուր 100 աղջկան բաժին էր ընկնում 160 և 170 նորածին տղա (ՄԱԿԲՀ, 2012): Երրորդ երեխայի դեպքում 160 հարաբերակցությունը գերազանցում էր անգամ առաջատար երկրների ցուցանիշներին և համարվում էր ռեկորդային (ՄԱԿԲՀ, 2012): Ընդհանուր առմամբ, Հայաստանում հարաբերակցության միջին ցուցանիշը 114.5 էր, իսկ որոշ մարզերում (մասնավորապես՝ Գեղարքունիքում և Շիրակում) այդ հարաբերակցությունը զգալիորեն գերազանցում էր միջին ցուցանիշը: Այս ցուցանիշներով Հայաստանը համեմատելի էր Չինաստանի (118) և Ադրբեջանի (116.5) հետ: Ի թիվս այլ հիմնավորումների՝ Հայաստանում տղա երեխայի նախապատվությունը կարող է հանդիսանալ խորքային մշակութային շրջանակում, որը կանանց ու աղջիկների համեմատաբար ավելի ցածր դերի մասին է խոսում և որպես սոցիալական խումբ՝ նրանց ավելի խոցելի դարձնելով կարծրատիպերի և խտրականության դրսևորման հետևանքով:
31. Ընդհանրապես, սոցիալական նորմավորումներն ու խտրական դրսևորումները կանանց և աղջիկների նկատմամբ բացասական ազդեցություն են ունենում զարգացման վրա (ՏՀԶԿ, 2014): Նրանց որպես սոցիալական խմբի հաղորդակցական իրադարձություններին անհավասար մասնակցությունը շրջանակումների որպես անկախ փոփոխականի դիտարկման տեսանկյունից իմաստների ձևավորման գործընթացում ներազդվող դերակատարություն է սահմանում կանանց և աղջիկների համար՝ ըստ էության նվազեցնելով կանանց ու աղջիկների արժեքը՝ արտոնյալ այլ սոցիալական խմբերի հետ համեմատած: Հայաստանում ՉԼՄ-ներում կանանց ներկայացվածության տարաբնույթ հետազոտությունները հաստատում են այդ դրույթը: Հետաքրքրական է, որ սոցիալական նորմերի ու պրակտիկաների համեմատական վերլուծությունները 108 երկրների շարքում Հայաստանը դասել են բարձր խտրականությամբ երկրների շարքում (ՏՀԶԿ, 2014): Բարձր խտրական դրսևորումներ արձանագրած երկրների հաշվարկված գործակցի միավորը տատանվել է 0.22-0.35 միջակայքում: Այս երկրներին բնորոշ է խտրականության առկայությունը սոցիալական նորմերում, գործնականում, ինչպես նաև օրենսդրության մակարդակում: Կանանց ֆիզիկական անվտանգությունը սահմանափակ է բռնությունը չնորմավորող օրենսդրության ու ինստիտուցիոնալ կարողությունների բացակայության կամ թույլ լինելու արդյունքում: Առկա են ընտանեկան բռնության նկատմամբ հանդուրժողական ընկալումներ: Այս երկրները, որպես կանոն, ունեն տղա երեխաների նախընտրության բարձր մակարդակ և նորածինների սեռերի հարաբերակցությունը բնականից շեղված է: Վերջապես, այս երկրներում կանանց համար ազատ տեղաշարժի ու այլ ռեսուրսների սահմանափակություն կա: Հայաստանի դեպքում լուրջ խնդիր են հանդիսանում սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումներն ու ընտանեկան բռնության մասին օրենքի բացակայությունը (ՏՀԶԿ, 2014):
32. Սոցիալական նորմավորումների տեսանկյունից հետաքրքիր է հասկանալ խորքային դրդապատճառները, որոնց վրա ազդում են կարծրատիպերը որպես առկա մշակույթով պայմանավորված շրջանակման հնարավորիության անցյալ ժամանակով պայմանավորված

տիրույթ: Հայաստանում հարցված կանանց 40 տոկոսը տղայի կարևորությունը պայմանավորել է «ընտանիքի շարունակողը» լինելու մշակութային խորքային իմաստի առկայությամբ (ՄԱԿԲՀ, 2012): Բացի այդ, երեխայի սեռով պայմանավորված՝ կնոջ դերը կարող է բարձրանալ, իսկ մասնակցությունը որոշումների կայացմանը՝ մեծանալ (Li, L., Wu, X. 2010): Այն կանայք, որոնք տղա երեխա չեն ծննդաբերում, ավելի շատ են ենթարկվում խտրական և անընդունելի վերաբերմունքի իրենց ընտանիքներում (Li, L., Wu, X. 2010): Այս շրջանակը կարող է վերաիմաստավորվել հաղորդակցական իրադարձություններին մասնակցության ռազմավարական շրջանակումների գործընթացի՝ ՉԼՄ-ների որպես խմբի ներգործուն ներկայության պայմաններում: Այն ենթադրում է սոցիալական նորմավորումների հնարավորինության սահմաններում շրջանակումների վերաիմաստավորում՝ հստակ սահմանազատելով արտոնյալ խմբերի հաղորդակցական իրադարձության հասանելիության նորմավորումը:

33. ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի գեկույցի հրապարակումից անմիջապես հետո մեկնարկած և 2013-2016թթ. ընթացքում հիմնական լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում հայտնված սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների վերաբերյալ խոսույթի շրջանակներում ՉԼՄ-ներում ինստիտուցիոնալ մակարդակով շրջանակման գործընթացները դիտարկելու միջոցով կարելի է ուսումնասիրել ամկա շրջանակումները և շրջանակման գործընթացը՝ պարզելու համար, թե որքանով են կանայք ու աղջիկները հնարավորություն ունեցել մասնակցելու տղա երեխայի նախապատվության և պտղի սեռի ընտրության շրջանակումը վերանայելու գործընթացին: Այդ վերլուծությունը թույլ կտա նաև վերհանել կանանց ու աղջիկների արժևորման վրա ազդող ՉԼՄ-ներում արտապատկերված շրջանակները:

Սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների քննարկման վերլուծությունը ՉԼՄ-ներում


34. 2012 թվականին պտղի սեռի ընտրության մասին գեկույցի հրապարակումից հետո այս թեման հայտնվեց հանրային ուշադրության կենտրոնում՝ այլ հանրային հարթակների շարքում նաև ՉԼՄ-ներում տևական քննարկումների շնորհիվ: Սույն հետազոտության իրականացման նպատակով էլեկտրոնային լրատվամիջոցների ընտրության հիմքում ընկած է եղել ամենամեծ ծածկույթ ունենալու առանձնահատկությունը: Տվյալների բազայում ընդգրկվել են 2013-2016թթ. ընթացքում հրապարակված բոլոր հոդվածները: Այդուհանդերձ, որոնվել են նաև 2012 և 2011 թվականներին հրապարակված հոդվածներ, ինչի արդյունքում գտնվել է 2011 թվականին հրապարակված միայն մեկ հոդված, իսկ 2012 թվականին հրապարակված նման բովանդակությամբ հոդված չի գտնվել: Ուստի, վերլուծության հիմքում ընկած են 2013-2016 թվականների ընթացքում հրապարակված հոդվածները, իսկ Հայաստանում տղա երեխայի նախապատվության վերանայման համար հիմնական նախաձեռնող շրջանակը համարվում է ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի գեկույցը:

Կայքը	Այցելությունների քանակը
News.am	18.334.004
lin.am	6.400.000
Tert.am	6.272.162
Aravot.am	4.797.81
168.am	2.741.984
Hraparak.am	2.130.067
Lragir.am	1.800.000
Hetq.am	1.637.895
Times.am	1.184.980
Panorama.am	1.118.835
Panarmenian.net	970.000
Yerkir.am	820.000
Galatv.am	670.000
Civilnet.am	650.000
Mediamax.am	430.000

35. Ընտրված 15 էլեկտրոնային լրատվամիջոցների ուսումնասիրության արդյունքում առանձնացվել է ուսումնասիրված ժամանակահատվածում՝ 2013-2016թթ. ընթացքում, հրապարակված, ընդհանուր առմամբ, 894 հոդված՝ դրանք հետազայում տվյալների բազայում ընդգրկելու նպատակով: Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման մասին հոդվածների նշանակալի մասը՝ 46 տոկոսը, լույս է տեսել 2014 թվականին, և այդ թեման լուսաբանվել է ուսումնասիրված բոլոր տարիների բոլոր ամիսների ընթացքում (տե՛ս՝ Պատկեր 1): Այնուամենայնիվ, նկատվել է լուսաբանման ծածկույթի որոշակի ընդլայնում, որը, բնականաբար, համընկել է ավանդաբար կանանց տոների հետ նույնացվող ամիսների հետ: Այսպես կոչված «կանանց տոների» ամիսներ մարտին և ապրիլին ուսումնասիրված լրատվամիջոցներում նկատվել է պտղի սեռի ընտրության վերաբերյալ քննարկումների սպասված աճը: Որոշ լրատվամիջոցներ շարունակել են քննարկել հարցն այն ամիսներին, երբ

մյուսները հակված են եղել աստիճանաբար փոխել իրենց օրակարգը: Այդուհանդերձ, սույն հետազոտության շրջանակներում առանձնապես չի թիրախավորվում այն երևույթը, որի միջոցով հնարավոր կլինի վերհանել հետաքրքիր նրբերանգներ տվյալ լրատվամիջոցի և միկրո և միջին մակարդակներում դրա փոխհարաբերությունները մասին:

Պատկեր 1. Ընտրված էլեկտրոնային լրատվամիջոցների ընդհանուր ծածկույթ, 2013-2016թթ.*



36. Սույն հետազոտության համար գործածվել են երկու՝ բանական և որակական վերլուծության մեթոդներ: Բանական վերլուծության ընթացքում կիրառված հիմնական վերլուծական հնարքներ էին՝ հավաքագրված տվյալների համադրումը և խաչումը: Ավելի բարդ վերլուծությամբ ներկայացվել է լրատվամիջոցների կողմից լուսաբանված թեմաների և օգտագործված աղբյուրների միջև կապը: Փոփոխականների խաչման հնարավորությունները բավականին մեծ են: Սակայն, սույն զեկույցի շրջանակներում կիրառվել են խաչման սահմանափակ թվով համադրման հնարքներ՝ հիմնական խնդիրները վերհանելու և բացահայտված շահագրգիռ կողմերի կարիքների հիման վրա կազմված տվյալների բազաները լրացուցիչ ուսումնասիրելու համար: Որակական վերլուծության շրջանակներում կարևորվել է այս կամ այն

սեռի ներկայացուցչին նկարագրելիս հաճախ օգտագործվող բառերի և արտահայտությունների որոշակի ընտրությունը: Վերլուծության նպատակն էր պարզել, թե արդյո՞ք գենդերային պատկանելիության առումով չեզոք բնույթի բառերը շրջանակման ընթացքում ձեռք են բերել գենդերային պատկանելիության ցուցիչի որոշակի գործառնայթ և նշանակություն՝ դրանով իսկ ստեղծելով և (կամ) ամրապնդելով որոշակի վարքագծերի սոցիալապես նորմալացմանը և տվյալ սոցիալական խմբի ընտրության սահմանափակմանը հանգեցնող կարծրատիպերը:

Տվյալների բազաների ընտրություն և պտղի սեռի ընտրության մասին հոդվածների կողավորում


- 37. Տվյալների բազան կազմելիս մշտադիտարկող խումբը հետադարձ կարգով ուսումնասիրել է 2011-2016 թվականների ընթացքում էլեկտրոնային ՉԼՄ-ների հրապարակած նյութերը՝ պահպանելով հուսալիության և վավերականության նկատառումներով մի շարք վերհանված կանոններ: *Յուսակալություն* ասելով՝ հասկացվել է, որ ցուցանիշները պետք է հետևողականորեն վերհանվեն վերապատրաստում անցած ցանկացած մշտադիտարկման մասնագետի կողմից: Որպես այդպիսին՝ յուրաքանչյուր կողմի կիրառումը միշտ ունենում է նույն արդյունքը՝ անկախ նրանից, թե ով է իրականացնում մշտադիտարկումը: Նման կողավորումն ապահովելու համար՝ մշտադիտարկողների մի խումբ իրականացրել է նախնական փորձնական մշտադիտարկում, որի ընթացքում յուրաքանչյուր ընտրված հոդված գնահատվել է ամբողջ խմբի կողմից՝ գենդերային հարցերով փորձագետի և հետազոտական խմբի ղեկավարի վերահսկողությամբ: Ավելին, հիմնաբառերին վերաբերող ցուցանիշները, ինչպես նաև լրատվության մեջ հանդիպող տարբեր թեմաները վերհանելու համար կանխորոշված կողերի ցանկերը եղել են ակնհայտորեն անկողմնակալ: Փորձնական մշտադիտարկման փուլում համակարգված և մանրակրկիտ վերապատրաստման, մենթորինգի (փորձի փոխանակման միջոցով երիտասարդ մասնագետների ուսուցման միջոց) և պրակտիկայի շնորհիվ հաջողվել է ապահովել հետևողականություն: Կողերի կանխորոշված ցանկը մշակվել է հետևյալ առանցքային հարցերի ցանկին գուզնթաց (տե՛ս՝ Հավելված 1):
- 38. Մշտադիտարկող խումբը փնտրել է շեշտադրման և ընտրության արտահայտված ձևերը, օրինակ՝ վերնագրեր, պատկերներ և տրամագրեր, ոճական հնարքներ, այսինքն՝ խոսքի ընտրություն, վերաբերմունք, չակերտների օգտագործում և հղում աղբյուրներին:

Մշտադիտարկող խումբը գնահատել է ոչ թե մշտադիտարկման առարկա հանդիսացող խնդիրները, այլ՝ լրատվամիջոցների վարքագիծը: Դրական և բացասական գնահատականները պայմանավորված են եղել այն հանգամանքով, թե արդյո՞ք ընթերցողը կամ հեռուստադիտողը տվյալ առարկայից կամ թեմայից ստացել է դրական թե՛ բացասական տպավորություն: Այն դեպքերում, երբ նյութը չի ստացել ոչ դրական և ոչ էլ բացասական գնահատական, այն գնահատվել է որպես չեզոք: Կարևոր էր նաև հասկանալ այնպիսի լրատվության գնահատման համատեքստը, որը լուսաբանվող նյութի կամ իրադարձության բնույթով նյութին հաղորդել է դրական կամ բացասական իմաստ: Լուսաբանման ձևը գնահատվել է դրական, եթե հաղորդման բնույթը և դրա ներկայացման ձևը եղել են դրական: Նույն տրամաբանությամբ՝ այն դեպքերում, երբ երկու գործոնները եղել են բացասական, լուսաբանման ձևը գնահատվել է բացասական: Այն դեպքերում, երբ երկու գործոնները եղել են չեզոք, լուսաբանման ձևը գնահատվել է չեզոք: Այն դեպքերում, երբ հաղորդման ներկայացման ձևը չի համապատասխանել հաղորդման ներկայացման համատեքստին, մշտադիտարկողները ստիպված են եղել լուսաբանման ձևը որոշել գերակշռող գործոնի հիման վրա (այսպիսով՝ դա կարող էր լինել կա՛մ հրապարակման բովանդակությունը, կա՛մ համատեքստը): Այսպես, *վավերականությունը* նշանակում է, որ ընտրված ցուցանիշներով, ըստ էության, նշվել է այն, ինչ նախատեսվել է: Ցուցանիշներն ընտրվել են հստակ նպատակով, և չեն մեկնաբանվում նախատեսվածից ավելին նշելու համար: Օրինակ, կանանց որպես աղբյուրի մեջբերումների քանակի հաշվարկը պարտադիր չէ, որ պետք է վկայի ՉԼՄ-ներում գեղեցիկ կողմնակալության դրսևորման մասին: Կանանց կարծիքների թերհաղորդումը կարող է ունենալ մի քանի հնարավոր բացատրություն: Պատճառը կարող է լինել ՉԼՄ-ների կողմից գեղեցիկ կողմնակալության դրսևորումը, սակայն հավասարազոր պատճառ կարող է լինել նաև պետական կառավարման մարմիններում, քաղաքական կուսակցություններում և գործարար ոլորտում կին ներկայացուցիչների պակասը: Այս տվյալներն արձանագրվել են բոլոր հրապարակումների առնչությամբ և ներկայացվել են գրաֆիկական պատկերների տեսքով՝ լրատվամիջոցների միջև առկա տարբերությունները և ժամանակի ընթացքում նկատվող տարբերությունները նշելու համար:


Արդյունքների քննարկում

39. Գնահատման որակական առումով մշտադիտարկող խումբը խնդրո առարկա թեմայի առնչությամբ ընտրված հոդվածները գնահատել է ներկայացված բովանդակության չեզոք, դրական կամ բացասական լուսաբանման տեսանկյունից: Դրական կամ բացասական գնահատականներ են նշանակվել խնդրո առարկա թեմայի մասին ընթերցողի մոտ համապատասխանաբար՝ դրական կամ բացասական տպավորության առաջացման պարագայում: Շրջանակման տեսանկյունից հետաքրքիր էր հասկանալ, թե ինչպես են ՉԼՄ-ները ներկայացնում պտղի սեռի ընտրությունը որպես առանձին թեմա: Ինչ վերաբերում է պտղի սեռի ընտրությանը, հայաստանյան հասարակությունը տեղյակ չի եղել այդ խնդրի մասին նախքան ՄԱԲԳ-ի զեկույցում հետազոտության արդյունքների ներկայացումը: Այսպիսով, տվյալ պարագայում, երբ գործ ունենք այն մասնավոր դեպքի հետ, երբ հասարակությունը տեղյակ չէ թեմայից և չունի թեմայի վերաբերյալ ոչ մի հստակ շրջանակում, «ի՞նչ խնդիր է ներկայացվում» ընդհանուր հարցը շատ նման է «ինչպե՞ս է ներկայացվում խնդիրը» հարցին, ինչի արդյունքում լրատվամիջոցները վերածվում են տվյալ հասարակության մեջ խնդրի շրջանակումը ձևավորող գլխավոր դերակատարների:
40. Հայաստանում պտղի սեռի ընտրության խնդրի լուսաբանման շրջանակը, ընդհանուր առմամբ, կրել է դրական բնույթ: Շատ հազվադեպ են արձանագրվել որևէ լրատվական հոդվածի հետ առնչվող բացասական շրջանակներ: 86 տոկոս են կազմել այն դեպքերը, երբ պտղի սեռի ընտրության, սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների, ծնելիության և տղա երեխայի նախընտրությունը լուսաբանելիս լրատվամիջոցները և լրագրողները պահպանել են հավասարակշռված և ոչ սենսացիոն լրատվության սկզբունքները (տե՛ս Պատկեր 2): Միայն 14 տոկոս են կազմել այն դեպքերը, երբ դատողությունները և գնահատականները տարբերվել են փաստացի գիտելիքից, իսկ հուզական պնդումներ արձանագրվել են մի քանի դեպքերում: Այս պատկերը կարող է պայմանավորված լինել մի շարք գործոններով: Առաջին, պտղի սեռի ընտրության մասին լուրն

Պատկեր 2. Հողվածների շրջանակների երանգավորում



Պատկեր 3. Հեղինակային և վերատպված հողվածների շրջանակումներ



լրատվամիջոցներում ներկայացված նյութերը մեծամասամբ լրագրողների և ՉԼՄ-ների հեղինակային նյութերն են: 2013-2016 թվականներին* հրապարակված հողվածների հիմնական մասը՝ 61 տոկոս դեպքերում, հանդիսացել են լրագրողների հեղինակային նյութերը: Միայն հողվածների 25 տոկոսն է վերցված այլ տեղական և (կամ) միջազգային ՉԼՄ-ներից: Որոշ դեպքերում այլ աղբյուրներից վերցված հողվածները չեն ներկայացվել ամբողջովին կամ կրճատվել են, ինչի արդյունքում հեղինակային նյութի բուն իմաստը մասնակիորեն կամ լիովին կորել է: Նման հրապարակումները կազմել են բոլոր հրապարակումների 14 տոկոսը (տե՛ս՝ Պատկեր 3):


43. Պտղի սեռի ընտրության, սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների, ծնելիության, տղա երեխայի նախընտրության թեմաները լուսաբանելիս լրագրողները և լրատվամիջոցները, ընդհանուր առմամբ, հակված են եղել դրական մոտեցում դրսևորել: Ինչպես հեղինակային, այնպես էլ ընտրողաբար կրճատված վերատպված հողվածներում լրագրողները մեծամասամբ խնդիրները ներկայացրել են դրական լուսաբանմամբ (տե՛ս՝ Պատկեր 4): Չեզոք մոտեցումը գերակշռել է միայն այլ աղբյուրներից վերցված հողվածներն ամբողջությամբ՝ առանց կրճատումների և առանձին հատվածների ընտրության վերատպելու դեպքերում: Սա ևս մեկ անգամ հաստատում է այն ենթադրությունը, որ հասարակության շրջանում պտղի սեռի ընտրության վերաբերյալ

անակնկալի բերեց ողջ հանրությանը, այդ թվում՝ լրագրողներին: Խնդիրը նախկինում չի քննարկվել, հետևաբար՝ գոյություն չեն ունեցել նաև կանխորոշված շրջանակներ, որոնցից հնարավոր կլիներ օգտվել վերաբանակցման համար: Երկրորդ, Խորհրդային շրջանից ժառանգված հղիության արհեստական ընդհատման իրավունքների քարոզարարչավի արդյունքում հղիության արհեստական ընդհատումը շատ կանանց համար ծառայել է որպես ընտանիքի պլանավորման հիմնական գործիք, և երկրում հղիության արհեստական ընդհատման ընդդիմախոսների թույլ ձայնը նույնպես կարելի է դասել այն գործոնների շարքում, որոնց պատճառով հայաստանյան իրականության մեջ գոյություն է ունեցել հղիության արհեստական ընդհատման գրեթե չգրված իրավունքների ընդունված մշակութային շրջանակ, որով կանխորոշվել է


41. քննարկման հնարավոր թեմաների ընտրությունը: Երրորդ, տվյալ թեման լուսաբանող լրագրողների 73 տոկոսը կանայք էին, որոնց մի մասը, հավանաբար, արդեն մայր էին դարձել (տե՛ս՝ Հավելված 2): Այսպիսով, այդ հանգամանքը, հավանաբար, նպաստել է թեմատիկ առումով ներգրավված և թեմային առնչվող շահագրգիռ խմբի կազմմանը, որին արտոնյալ կարգով հասանելի են եղել ՉԼՄ-ները: Չորրորդ, այն հանգամանքը, որ տվյալ թեման, ըստ էության, առնչվում է երեխաներին, այսինքն՝ անվանականորեն բարձր արժևորված շրջանակմանը, կարող էր նպաստել խնդիրն ամբողջապես բացահայտելու նպատակին ուղղված կա՛մ դրական, կա՛մ էլ չեզոք մանրամասն լուսաբանման:

42. Ուսումնասիրված էլեկտրոնային

Պատկեր 3. Էլեկտրոնային լրատվամիջոցներով հրապարակված հեղինակային նյութեր



Պատկեր 5. Էլեկտրոնային լրատվամիջոցներով լուսաբանված առանձին մարդկանց պատմություններ




կանխորոշված շրջանակումների բացակայությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ այս մասնագիտական խնդիրը, որը կարող է լինել նաև անմիջական անձնական հետաքրքրություն ներկայացնող հարց, լուսաբանող լրագրողների մեծ մասը կանայք են, կարող էին դրական բնույթ հաղորդել խնդրի լուսաբանմանը:


44. Պտղի սեռի ընտրության, սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների, ծնելիության, տղա երեխայի նախընտրության թեմաները լուսաբանելիս լրագրողները և լրատվամիջոցները մեծամասամբ առանձին մարդկանց պատմություններ չեն ներկայացրել՝ նրանց ուղերձը փոխանցելու և (կամ) պատշաճ հետաքննություն իրականացնելու համար: Նման գործելակերպը կարող է պայմանավորված լինել կա՛մ նրանց լրագրողական աշխատանքում նման ոճի տարածված չլինելով, կա՛մ էլ տվյալ թեմայի նրբաբնույթ կողմերով, որոնց պատճառով հրապարակումների հեղինակները խուսափել են այդ ոճից: Հոդվածների մեծ մասում (տե՛ս՝ Պատկեր 5) առանձին մարդկանց պատմությունների մասին ոչինչ չի նշվել: Այդուհանդերձ, մասնավոր լրագրողական հետաքննության մաս կազմող կամ ինքնապատակ հրապարակված խիստ հազվադեպ հանդիպող առանձին մարդկանց պատմությունները լուսաբանվել են շատ դրական: Հնարավոր է, որ նյութերը պատրաստելիս լրագրողներն ու լրատվամիջոցները մեծամասամբ օգտվել են այլ մասնագիտական աղբյուրներից, ինչը կարող է բացատրել լրագրողական հետաքննության մաս կազմող առանձին մարդկանց պատմությունների փոքր քանակը:

- 45. Հավասարակշռված և ոչ սենսացիոն լրատվության սկզբունքով պատրաստված նյութերի գրեթե կեսից ավելի մասում լրագրողները և լրատվամիջոցները որոշել են միայն վերհանել պտղի սեռի ընտրության, սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների և տղա երեխայի նախընտրության խնդիրները: Նյութերի մյուս մասում փորձեր են արվել նաև ստեղծել հանրային ֆորում տվյալ խնդիրը և դրա հիմքում ընկած պատճառները հասկանալու համար (տե՛ս՝ Պատկեր 6): Այս առումով շատ կարևոր է հասկանալ, թե լրագրողական հետաքննությանը հիմնականում չհակված լրագրողներին հաջողվել է արդյո՞ք ստեղծել հավասարակշռված հանրային ֆորում, որտեղ քննարկվել և բարձրաձայնվել են բոլոր բարդ և վիճելի հարցերը:
- 46. Լրագրողական հետաքննությունների փոքր քանակի պայմաններում պտղի սեռի ընտրության, սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների և տղա երեխայի նախընտրության թեմաները լուսաբանելիս լրագրողների և ՀԼՄ-ների՝ այս կամ այն կողմին սատարելու հակումը զարմանք չի առաջացնում (տե՛ս՝ Պատկեր 7): ՀԼՄ-ներից դուրս գործող դերակատարների կողմից առաջարկվող շրջանակումները և խնդիրը լուսաբանող լրագրողների անհատական նախասիրությունները, ըստ էության, կարող էին մեծապես հանգեցնել այս խնդիրների միակողմանի, սակայն, դրական լուսաբանմանը: Այս իրավիճակից


Պատկեր 6. Հողվածներում վերահանված խնդիրները և առաջարկվող լուծումները



Պատկեր 7. Թեման լուսաբանելիս այս կամ այն կողմին սատարելը




Պատկեր 8. Էլեկտրոնային հողվածներում արտահայտված կարծիքները



պարզ է դառնում, որ ՉԼՄ-ները՝ որպես կանխորոշված ճանաչողական և նորմատիվ ցուցանիշներ ունեցող ինստիտուցիոնալ սուբյեկտ, դրսևորել են թույլ հատկանիշներ՝ դրանով իսկ հնարավորություն տալով որոշակի արտաքին և ներքին խմբերին գերիշխող ներազդեցություն ունենալ լուսաբանման օրակարգի և երանգի վրա: Եթե լրագրողների 73 տոկոսը չլինեին կանայք, և եթե որոշակի նախնական շրջանակներ խիստ մեծ ազդեցություն չգործեին հասարակական համատեքստի վրա, լուսաբանման արդյունքը և երանգը, հավանաբար, շատ կտարբերվեին: Այսպես, մարդու իրավունքների ոլորտի այլ բավականին վիճելի թեմաների լուսաբանման դեպքում կանայք որպես սոցիալական խումբ վիճելի կարծիքներ բարձրաձայնելու հնարավորություն չէին ունենա: Այն փաստը, որ երեխայակենտրոն հիմնախնդիրը, որը ներկայացվել է ոչ թե մարդու կյանքի հիմնարար իրավունքի, այլ ավելի շուտ՝ ժողովրդագրական աղետի տեսանկյունից՝ դրանով իսկ ցույց տալով կանանց և աղջիկների նկատմամբ դրսևորվող խտրականությունը, նպաստել է ֆորումի ստեղծմանը, որի շրջանակներում լրագրողներն արձագանքել են այդ խնդիրներին և չեն խորացել կյանքի իրավունքի մերժման հիմքում ընկած պատճառների ուսումնասիրության մեջ, ինչն ավելի շատ համընկնում է ֆեմինիստական դիրքորոշմանը և հազվադեպ է այդ տեսանկյունից ներառվել լրատվական հոդվածներում:


47. Հետաքրքրական է, որ ուսումնասիրված հոդվածների մեծ մասի հեղինակները որոշել են ներկայացնել հարցի միայն մեկ կողմը՝ միաժամանակ փորձելով որոշ չափով պահպանել հավասարակշռված և ոչ սենսացիոն լրատվության սկզբունքը: Դա հիմնականում դրսևորվել է պտղի սեռի ընտրության, պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների և տղա երեխայի նախապատվության թեմայով նախնական գիտելիք և (կամ) այդ հարցի շուրջ հստակ դիրքորոշում ունեցող այս կամ այն մասնագետի ասածների մեծաքանակ մեջբերումներով (տե՛ս՝ Գծապատկեր 8): Սա ևս մեկ անգամ ապացուցում է, որ որպես ինստիտուտ՝ ՉԼՄ-ները հիմնականում չեն կիրառել լրատվության կանխորոշված ճանաչողական և նորմատիվ չափանիշներ, և ինչպես լրագրողները, այնպես էլ արտաքին խմբերը հաջողությամբ գերիշխել են լուսաբանման օրակարգի և երանգի ոլորտում:

Պատկեր 9. Լրատվության նյութերում պետական պաշտոնյաների հայտարարությունները հարցականի տակ դնելու պրակտիկան



շրջանակներում հազվադեպ են քննարկվել խտրականության դրսևորումների համար հիմք հանդիսացող խորապես արմատացած մշակութային կարծրատիպերը: Հիմնականում քննարկվել է պտղի սեռի ընտրության գործընթացը հիվանդանոցային պայմաններում կարգավորելու անհրաժեշտությունը՝ մեծ պատասխանատվություն դնելով փոքր թվով մասնագետների վրա և կրկնակի հուզական բեռ դնելով այն կանանց ուսերին, ովքեր պետք է ինքնուրույն որոշում կայացնեն պտուղը հեռացնելու մտադրությամբ բժշկին այցելելուց հետո: Մտահոգության տեղիք է տալիս նաև այն դիտարկումը, որը թեպետև վերաբերում է հանրության համար հետաքրքրություն ներկայացնող այլ թեմաներին, սակայն լրացուցիչ ուսումնասիրության կարիք ունի. դա լրագրողների շրջանում տարածված՝ պետական պաշտոնյաների մեջբերումները և (կամ) տվյալները հարցականի տակ չդնելու պրակտիկան է,

Պատկեր 10. Հոդվածներում հակադիր կարծիքների ներառումը




իրավունքի թե՛ կողմնակիցների և թե՛ հակառակորդների կարծիքները համապատասխան հոդվածներում, թերևս, չեն ներառվել (տե՛ս՝ Պատկեր 10): Հաճախ փորձագիտական ոճով ներկայացվել է հարցի մասնագիտական կողմը, իսկ հարցի վիճելի կողմերը մեծ մասամբ չեն լուսաբանվել: Շրջանակման մակրո մակարդակի մասին խոսելիս կարելի է պատկերացնել, որ կաթոլիկ եկեղեցու ավանդույթները ժառանգած կամ եկեղեցու ուժեղ ազդեցությունը կրող երկրում անհնար կլիներ անտեսել հարցի այդ կողմը: Այդուհանդերձ, հաշվի առնելով Խորհրդային միությունից ժառանգած ավանդույթները և դեռևս հաճախակի որպես

48. Լրագրողները հազվադեպ են հարցերի և փաստերի պատշաճ կարգով ստուգելու միջոցով հակադրվել պետական պաշտոնյաների հայտնած տվյալներին և պնդումներին (տե՛ս՝ Պատկեր 9): Լրագրողները մեծամասամբ չեն ստուգել այլ շահագրգիռ կողմերի պնդումների հավաստիությունը և վիճելի հարցերի վերաբերյալ լրացուցիչ հարցեր չեն ուղղել: Չարմանալի չէ, որ հղիության արհեստական ընդհատման և ժողովրդագրական ճնշման տարածված գործելակերպ ժառանգած երկրում տվյալ թեման հավասարակշռված սկզբունքով կենտրոնացավ աղջիկ երեխաներին փրկելու անհրաժեշտության խնդրի վրա՝ ապահովելու համար, որ 2025 թվականին Հայաստանը չի բախվի տղաների՝ գույգ գտնելու անհնարինությանը և միգրացիայի խնդրի հետագա խորացմանը: Ֆորումի


49. Հղիության արհեստական ընդհատման նորմատիվ ցուցանիշների արդյունքում: Նույն հաջողությամբ այս կամ այն ընտրախավին պատկանող ցանկացած արտոնյալ խումբ կարող է իրեն անհամաչափ դերակատարում ստանձնել հանրային ֆորումում գրեթե չհանդիպելով այլընտրանքային պնդումների և հարցերի միջոցով հակադրման որևէ փորձի: Նման իրավիճակն ինքնին կարող է հանգեցնել հասարակության մեջ անհավասարության առաջացմանը և պահպանմանը՝ արտոնյալ խմբերի համար խոսույթային հանրային տիրույթի հասանելիությունն ապահովելու և նույն հասարակության այլ սոցիալական խմբերն էլ ավելի մեկուսացնելու միջոցով:

ընտանիքի պլանավորման տարբերակ համարվող հղիության արհեստական ընդհատման տարածված պրակտիկան՝ խնդրի այս կողմը հրապարակավ չի ներկայացվել: Ֆեմինիստական շարժման կողմնակիցների կողմից մշտապես քարոզվող «իմ մարմինը՝ իմ իրավունքը» կարգախոսը և (կամ) կարծիքները խոսույթում չեն ներկայացվել: Չարմանայի չէ նկատել, որ էլեկտրոնային լրատվամիջոցներով լուսաբանվող նյութերում գրեթե երբեք չեն քննարկվել կարծրատիպերի և հայրիշխանության հարցերը: Շրջանակման միջոցով ձևակերպված խնդիրն ավելի շուտ ազգային կարևորություն ունեցող երեխայակենտրոն ժողովրդագրական անվտանգ՝ ոչ խնդրահարույց հարց է:

Պատկեր 12. Ուսումնասիրված հողվածներում կիրառված լրատվական հնարքները



հնարքի, որով հնարավոր կլիներ վերհանել կողմնակալության, մանիպուլյացիայի կամ խեղաթյուրման դրսևորումները: Ի սկզբանե նախնական շրջանակումների բացակայությունը և որպես երեխաների և ազգային շահի համար վտանգավոր շրջանակված խնդրի հետ լրագրողների հնարավոր բնական կապի բերումով նրանք ցանկացել են հնարավորինս մանրամասն լուսաբանել այն: Սակայն ինստիտուցիոնալ ճանաչողական և նորմատիվ թերի չափանիշների պատճառով նրանք զրկվել են խնդիրը դիտարկելու ձևավորված գործընթացից, որի միջոցով հնարավոր կլիներ կանխել ստորև երկու տարբերակը, այսինքն՝ այլ շահագրգիռ կողմերի գերակայության հաստատումը և խոսույթային տիրույթում անձնական նպատակներ հետապնդելը, ինչը հանգեցնում է հնարավոր ռիսկերի, որոնք տվյալ դեպքում հանգեցրել են խնդրո առարկա թեմայի ոչ ամբողջական ուսումնասիրությանը և լուծման տարբերակների ավելի մեծ




շրջանակի որոնմանը:

51. Թեև պտղի սեռի ընտրության, սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների, ծնելիության և տղա երեխայի նախընտրության թեմաները լուսաբանող լրագրողները մեծամասամբ ծանոթ են եղել խնդրին վերաբերող տերմինաբանությանը, նրանք, այնուամենայնիվ, դժվարանում էին վերարտադրողական ընտրությունը խտրականության դրսևորումից տարբերակելու հարցում (տե՛ս՝ Պատկեր 12): Լրագրողները նման դժվարության չէին բախվի, եթե նախապես ուսումնասիրած լինեին խնդրի վերաբերյալ խիստ հակադիր կարծիքներին և ծանոթանային հղիության արհեստական ընդհատման իրավունքի

հակառակորդների և կողմնակիցների առանցքային շրջանակումներին: Արդյունքում, նրանք կկարողանային վերհանել խտրականության տարրեր պարունակող ընտրության մասին վկայող լրացուցիչ նրբերանգները և բացահայտել քննարկման համար մի շարք թեմաներ, որոնք հետազոտության անցկացման ժամանակահատվածում չեն հանդիպել:

Պատկեր 13. Բժշկական և ոչ բժշկական ցուցումների տարբերակումը



բժշկական ցուցումները: Ճանաչողական և նորմատիվ շրջանակների նկատմամբ կիրառվող թույլ արտահայտված ինստիտուցիոնալ չափանիշների պատճառով լրագրողները ստիպված են մենակ դիմակայել այս ոլորտում կարևոր դերակատարում ստանձնած այլ շահագրգիռ կողմերի առաջարկված շրջանակումներին:

52. Վերարտադրողական ընտրության և խտրականության տարբերակումը դժվարացնող անորոշ գիտելիքից բացի մյուս գործոնը հանդիսացել է հղիության արհեստական ընդհատման համար բժշկական ցուցումների ոչ հստակ ընկալումը: Նախքան այս հարցը գնահատելը մշտադիտարկող խումբը ծանոթացել է ապագա մայրերին հղիության արհեստական ընդհատումը թույլատրող սոցիալական և բժշկական ցուցումների օրենքով նախատեսված ցանկին, և իր գնահատականի համար հիմք ընդունել այդ ցանկի բովանդակությունը և քննարկումը: Կողմավորման արդյունքում պարզ է դարձել, որ հղիության արհեստական ընդհատման խնդիրը քննարկելիս լրագրողներն իրենց նյութերում և հրապարակումներում հիմնականում դժվարացել են տարբերակել բժշկական և ոչ

Կանխակալության և խեղաթյուրման դրսևորումները այս կամ այն սեռի ներկայացուցիչներին նկարագրելիս

53. Դեպքերի մեծ մասում պտղի սեռի ընտրության և պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների խնդիրների ակտիվ քննարկման արդյունքում՝ ազգային անվտանգության և ժողովրդագրական հաշվեկշռի տեսանկյունից պտղի սեռի ընտրության գործելակերպի հնարավոր ռիսկերի վերաբերյալ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի ուսումնասիրությունից բխող շրջանակն ընդլայնվել է: Լրատվական հոդվածների ընդհանուր վերլուծությունից պարզ է դարձել, որ լրագրողները հիմնականում հետամուտ են եղել տվյալ խնդրի մասնագիտական քննարկմանը և շատ դեպքերում խուսափել են պտղի սեռի ընտրության խնդրի բավականին վիճելի կողմերի, օրինակ՝ կարծրատիպերի և հիմնարար իրավունքի, այն է՝ ընտրության իրավունքի ավելի մանրագնին ուսումնասիրությունից: Ակնհայտ էր, որ հղիության արհեստական ընդհատման խնդրի քննարկման ժամանակ լրագրողները դժվարացել են տարբերակել վերարտադրողական ընտրության դեպքերը խտրականության հստակ դրսևորումների դեպքերից: Ընդհանուր առմամբ, հրապարակումներում խնդիրը ներկայացվել է որպես ժողովրդագրական խնդիր, և քննարկվող լուծումների կիզակետում են եղել հիմնականում բժշկական ոլորտի հարցերը, իսկ խնդրի մյուս խորքային պատճառներն անտեսվել են, ինչի արդյունքում կարող են մշակվել քաղական լուծման որոշակի տարբերակներ, այլ ոչ թե՛ ավելի ծավալուն քաղաքական միջոցառումներ:

54. Միանգամայն ակնհայտ է, որ խնդրի շրջանակումից և ՉԼՄ-ների միջոցով դրա լայնածավալ լուսաբանումից հետո 2016 թվականի օգոստոսին «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքում կատարված փոփոխությամբ պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատում արգելվեց, հղիության արհեստական ընդհատման համար դիմած կանանց համար


սահմանվեց խորհրդատվություն, ինչպես նաև վերջնական որոշում կայացնելու ժամկետ՝ երեք օրացուցային օր, իսկ օրենքը խախտող բուժաշխատողների համար սահմանվեց պատասխանատվություն: Թեև այդ քայլը դրական էր, այն, ամեն դեպքում, միակողմանի լուծում էր, որտեղ անտեսվել էին պտղի սեռի ընտրության հիմնախնդրի տարածմանը հանգեցրած առանցքային գործոնները:

55. Հղի կանանց հասանելի ոչ բժշկական ցուցումների շրջանակներում նրանք կարող են դիմել հղիության արհեստական ընդհատման, որի դեպքում պտղի սեռի ընտրության փաստը կարող է չարձանագրվել, սակայն նման ընտրության պրակտիկան, այնուամենայնիվ, պահպանվում է: Թեև լրատվամիջոցներով հրապարակված հոդվածները նպաստել են խնդրի բարձրաձայնմանը և խթանել դրա՝ հանրային օրակարգում ընդգրկվելու համար անհրաժեշտ պահանջներին համապատասխանությանը, գտնված լուծումը, այդուհանդերձ, հանգեցրել է հղիության արհեստական ընդհատման դիմելու այլ գաղտնի և օրինական տարբերակներից օգտվելու հնարավորությանը: Ընդհակառակը, լրատվամիջոցներով հրապարակված հոդվածներում լրագրողները կարող էին դիտարկել պտղի սեռի ընտրության վրա ազդեցություն գործող բոլոր գործոնները՝ որպես կանանց և աղջիկների նկատմամբ խտրականության դրսևորման փաստի հստակ ապացույց լուսաբանելու տարբերակը, սակայն չարեցին դա: Վերը ներկայացված խոսույթային պրակտիկայի նկատմամբ ինստիտուցիոնալ առումով կիրառվող ճանաչողական և նորմատիվ թույլ արտահայտված չափանիշներից բացի՝ կարող են լինել նաև բազում այլ պատճառներ:
56. Վերջերս ներկայացրած իր դիտարկումներում Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով ՄԱԿ-ի կոմիտեն մտահոգություն է հայտնել «...ընտանիքում և հասարակության մեջ կանանց և տղամարդկանց դերերի և պարտականությունների վերաբերյալ խտրական կարծրատիպերի պահպանման վերաբերյալ, որոնք խաթարում են կանանց սոցիալական կարգավիճակը և կրթական ու մասնագիտական կարիերան»: Կոմիտեն հայտարարել է նաև, որ իրեն հայտնի է, որ «կանանց դեմ ուղղված նման կարծրատիպերը և արժանապատվությունը նվաստացնող պատկերացումները փոխանցվում են դասագրքերով և պատշաճ մշտադիտարկման չենթարկվող ՉԼՄ-ներով»: Ի թիվս այլ պահանջների՝ Կոմիտե կոչ է արել «վերացնել գենդերային կարծրատիպերը և ապահովել, որպեսզի ՉԼՄ-ները խթանեն կանանց՝ որպես սոցիալական, տնտեսական և քաղաքական կյանքի ակտիվ մասնակիցների դրական կերպարները»:¹
57. Ինստիտուցիոնալ առումով կիրառվող ճանաչողական և նորմատիվ չափանիշների թերի բնույթի պայմաններում, ինչի հետևանքով ՉԼՄ-ները հանդես են գալիս ոչ թե որպես խոսույթային տիրույթի դերակատարներ, այլ ավելի շուտ՝ որպես խոսույթային տիրույթ, տեղական մշակույթով պայմանավորված տվյալ տարածաշրջանի շրջանակումները կրող լրագրողները, հավանաբար, իրենց անձնական շրջանակումներն են ներդրել պտղի սեռի ընտրության և պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման վերաբերյալ խոսույթի մեջ՝ դրանով իսկ շատ դեպքերում խուսափելով տղա երեխայի նախապատվության հիմքում ընկած մշակույթով պայմանավորված պատճառների մանրագնին դիտարկումից և քննարկումից: Միանգամայն հնարավոր է, որ որոշակի հնարքներ ընտրելիս նրանք ձգտել են չեզոք դիրքորոշում արտահայտել, իսկ խնդիրը լուսաբանելու համար իրենց խոսքում ակամա վերարտադրել են կրթական համակարգում և ՉԼՄ-ներում բավականին հաճախ հանդիպող առկա կարծրատիպերը, որոնց մասին խոսվել է վերոնշյալ «Եզրափակիչ դիտարկումներում»:
58. Լրատվամիջոցներով հրապարակված հոդվածների մշտադիտարկման ընթացքում մանրակրկիտ ուսումնասիրվել է Էլեկտրոնային լրատվամիջոցների նյութերի բովանդակությունը՝ կանանց կամ տղամարդկանց վերաբերյալ ոչ ճշմարտացի, խեղաթյուրված կամ կանխակալ պնդումները վերհանելու համար: Կատարվել է այս բոլոր հարցերի առանձին-առանձին վերլուծություն, չափագրում, ինչպես նաև առանձնացում, ինչը թույլ է տվել վերլուծել լրատվամիջոցի կողմից դիտավորությամբ կամ առանց դիտավորության կարծրատիպային լուսաբանման մակարդակը, որը հանգեցրել է հասարակության մեջ

¹ «Եզրափակիչ դիտարկումներ Հայաստանի հինգերորդ և վեցերորդ համակցված պարբերական զեկույցների վերաբերյալ», ԿՆԽՎԿ, 2016թ. նոյեմբերի 18:


շրջանառվող կանխակալ մտքերի ազատ ներթափանցմանը ներս՝ վերահաստատելով առկա իրավիճակը:

Պատկեր 15. Հողվածների ոճը



համապատասխանող փաստեր են ներկայացրել այն դեպքերում, երբ մեջբերել են այլ շահագրգիռ կողմերի ասածները՝ առանց հակադրելու դրանց փաստեր կամ որևէ կերպ կասկածի տակ դնելու նրանց պնդումները: Փոխարենը, նրանք ընտրել են այդ պնդումները չակերտների մեջ ներկայացնելու տարբերակը: Սա ևս մեկ անգամ վկայում է այն մասին, որ մեջբերված պնդումները որոշակի անհատական արձագանք են գտել և այդ իսկ պատճառով հաղորդվել են լրատվամիջոցներով, սակայն այս վարկածը լրացուցիչ ուսումնասիրման կարիք ունի:

Պատկեր 4. Ուսումնասիրված հողվածներում իրականությանը համապատասխանող փաստերի արտացոլում



ձևակերպումներով կազմել են միայն չորս տոկոս, իսկ տղամարդկանց պարագայում նման ձևակերպումներ գրեթե չեն հանդիպել:


61. Հողվածներում պտղի սեռի ընտրությունը և պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման խնդիրները լուսաբանելիս լրագրողները չեն մեղադրել որևէ անհատի կամ ընտանիքի: Նրանք ընկալել են մասնագիտական տեսանկյունից խնդրի բարդությունը և (կամ) ներկայացրել խնդրի բարդ բնույթից տեղյակ շահագրգիռ կողմերի մասնագիտական գիտելիքը: Հողվածների ճշգրիտ մեծամասնությունը չեն պարունակել որևէ

59. Լրագրողների ճշգրիտ մեծամասնությունը փորձել է հաղորդել իրականությանը համապատասխանող փաստերը, թեպետև ներկայացրել է այլ շահագրգիռ կողմերի հայտնած փաստերը և դիրքորոշումները և չի լուսաբանել պտղի սեռի ընտրության, սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների, ծնելիության և ամենակարևորը՝ տղա երեխայի նախընտրության խնդիրների բոլոր կողմերը: Այն դեպքերում, երբ լրագրողները, այնուամենայնիվ, ներկայացրել են իրականությանը համապատասխանող փաստեր, այսինքն՝ հաղորդումները ներկայացրել են այնպիսի ձևաչափով, որը ընթերցողը կարող էր շփոթել նախկինում ձեռքբերված փաստացի գիտելիքի հետ, նրանք օգտագործել են այլ անձանց խոսքը (տե՛ս՝ Պատկեր 14): Ավելի ճիշտ՝ լրագրողներն իրականությանը

60. Ընդհանուր առմամբ, էլեկտրոնային լրատվամիջոցների հողվածները տղամարդկանց և կանանց նկատմամբ բացասական պնդումներ չեն պարունակել (տե՛ս՝ Պատկեր 15): 81 տոկոս են կազմել այն դեպքերը, երբ օգտագործված նկարագրությունը կամ խոսքը չեն պարունակել կանխակալության և (կամ) սխալ ձևակերպումների որևէ ակնհայտ նշան: Մշտադիտարկող խումբը բացասական կամ դրական ձևակերպումների ազդեցությունը, դրանց առկայության դեպքում, գնահատել է հինգ միավորանոց սանդղակով՝ խիստ բացասականից մինչև չեզոք և խիստ դրական: Տղամարդիկ և կանայք հավասարապես ներկայացվել են բացասական տեսանկյունից, սակայն ինչ վերաբերում է երկու սեռերից որևէ մեկի ներկայացուցիչների մասին դրական արտահայտություններին, այն դեպքերը, երբ կանանց անդրադարձել են դրական

պնդում, որը հնարավոր լինել մեկնաբանել որպես հղիության արհեստական ընդհատման դիմած կանանց և (կամ) նրանց ընտանիքի անդամների քննադատություն (տե՛ս՝ Պատկեր 16):

Figure 16. Կանանց և (կամ) նրանց ընտանիքի անդամների վրա հարձակում



62. Հղիության արհեստական ընդհատման դիմելու որոշում կայացրած կանանց նկատմամբ խիստ քննադատության շատ քիչ դեպքեր, այնուամենայնիվ, արձանագրվել են: Այս վերլուծության մեջ ընդգրկման համար ընտրված նման դեպքերից մեկն ունեցել է հետազոտության նպատակի տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող մի շարք առանձնահատկություններ: Լրատվամիջոցներից մեկը որոշել է վերատպել (վերարտադրել) մի կրոնական կայքից, այն է՝ Qahana.am կայքից մի բլոգային հոդված: Այն ներկայացվել է լրատվական բաժնում, և այն անհնար էր շփոթել կարծիքների բաժնում, որպես կանոն, գետնովոդ նյութի հետ: Ընդ որում՝ դա կրոնական կազմակերպության բլոգային հոդված էր, որը թեև իրավաչափ էր իր իրավունքի տեսանկյունից, բավականին

տարօրինակ տեսք ուներ որպես ժողովրդավարական երկրի հանրային լրատվամիջոցում տպագրված էսսե, որտեղ սահմանադրությամբ եկեղեցին առանձնացված էր պետությունից: Եվ վերջապես, հրապարակումն իր ողջ իմաստով մեղքը դնում էր «երեխային սպանելու» որոշում կայացրած անհատի հոգու վրա: Այս դեպքը դասական օրինակ է, որը ցույց է տալիս, թե ինչպես է լրատվամիջոցի՝ ինստիտուցիոնալ առումով կիրառվող ճանաչողական և նորմատիվ չափանիշների թերության պատճառով էսսեի ձևաչափով արտահայտված մասնավոր կարծիքը ներթափանցել հիմնական լրատվական բաժնի, ինչը չէր պատահի, եթե լրատվամիջոցները միմիայն խոսույթային տիրույթ լինելու փոխարեն՝ հանդես գային որպես դերակատար:

Ապահով դիրք գրավելը. սեռական պատկանելիության հիմքով գերապանցության գաղափարախոսության և սեռական պատկանելիության հիմքով կարծրատիպային պատկերացումների ձևերը

63. Թեև ողջամիտ լրատվության նկատառումներով շատ դեպքերում հարկավոր է մեջբերումներ անել «գրվածի պլոժեն հագեցնելու կամ դրան երանգ հաղորդելու համար»², դրանց հիմնական նպատակն է խթանել պլոժեի զարգացմանը, այլ ոչ թե փոխարինել լրագրային հոդվածների պատրաստման բուն գործընթացը: Ավելին, գոյություն ունեն պնդումներ հաղորդելու որոշակի կանոններ: Այսպես, ակնհայտ երևույթների վերաբերյալ պնդումների պարագայում հարկավոր է գերծ մնալ դրանք որպես ուղղակի խոսք մեջբերելուց կամ պետք է հետևողականորեն օգտվել տերմինների ցանկից՝ անգամ չակերտ դնելու մասին որոշում կայացնելիս: Մեջբերումները չպետք է չստուգվեն միայն խոսքի ազատության դրսևորում լինելու հիմքով, քանի որ ուղենշային սկզբունքն է ճշմարտացի և հավասարակշռված լուսաբանումը, մինչդեռ իրականում ինքնաբերաբար առաջարկվում են ճանաչողական և նորմատիվային ցուցանիշների վրա հիմնված որոշակի դիտավորյալ ինստիտուցիոնալ միջոցառումներ, որոնց միջոցով ստուգվում է ոչ թե ՉԼՄ-ներով հրապարակվող նյութի բովանդակությունը, այլ՝ այն ներկայացնելու ոճը:

² Reuters Operations Guidebook, http://handbook.reuters.com/index.php?title=Reporting_and_Writing_Basics#Basic_story_structure

64. Լրագրողների հիմնական պարտականություններից մեկը պետք է լինի սեռական պատկանելիությանը, ազգությանը, արտաքին տեսքին, տարիքին և սեռական կողմնորոշմանը վերաբերող «կլիշեների» գործածումից զերծ մնալը, ինչի նկատմամբ պետք է վերահսկողություն իրականացնեն լրատվամիջոցները:³ Բնական խոսք գործածելու ձգտում ունեցող լրագրողները պետք է բնական խոսքով շարադրեն իրենց նյութը: Ուղենշային սկզբունքն է խուսափել կարծրատիպերի տարածմանը խթանող պատմություններից և հատվածներից: Մեկ այլ ուղենշային սկզբունք է ուսումնասիրել այն լրատվական նյութի և հատվածների վերաբերելիությունը տվյալ թեմային, որոնք ցանկանում է ներկայացնել լրագրողը: Տարածված սխալներից է նաև գենդերային հիմքով ձևակերպված բառակապակցությունների գործածումը: Այս բոլոր սկզբունքների պահպանումն անհրաժեշտ է ապահովելու համար, որ լրատվամիջոցները չտարածեն և դրանով իսկ չամրապնդեն առկա կարծրատիպերն ի վնաս թիրախ խմբին: Դա լավ երաշխիք է, որպեսզի լրատվամիջոցները թույլ չտան կարծրատիպերում հստակ արտացոլված անհիմն համոզմունքների համակարգերի միջոցով որոշակի խմբերի գործողությունները սահմանափակող շրջանակումներին ստանալ բավարար հասարակական աջակցություն և պահպանել տվյալ խմբերի մեկուսացված կարգավիճակը կամ տարածված անհիմն համոզմունքների և դրանց շրջանառության միջոցով որոշ չափով արտոնյալ կարգավիճակ շնորհել այլ խմբերին:

65. Ուսումնասիրված լրատվական նյութերում հանդիպած կարծրատիպերը և գենդերային հիմքով ձևակերպված բառակապակցություններն այդ նյութերի մեջ ներթափանցել են մեծամասամբ լրագրողների կողմից տարբեր շահագրգիռ անձանց ուղղակի խոսքի մեջբերումների միջոցով: Տեքստերի կառուցվածքի ուսումնասիրության ընթացքում նկատվել են մի շարք բավականին ակնհայտ հարցեր, որոնք քննարկման առարկա դարձնելու կարիք չկա: Առաջին, շատ դեպքերում շահագրգիռ կողմի ասածը մեջբերելու կարիք չկար, քանի որ այն նյութի սյուժեի զարգացմանը որևէ կերպ չի նպաստել: Երկրորդ, խիստ կարծրատիպային պնդումները հաճախ գետնովել են տեքստում չակերտների մեջ, ինչը արվել է կա՛մ ոչ կանխամտածված, կա՛մ էլ ավելի ապահով դիրք գրավելու փորձի արդյունքում: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ նման նյութերի մեջ պարունակվող կարծրատիպերի և գենդերային հիմքով ձևակերպված բառակապակցությունների թիվը եղել է խիստ սահմանափակ, և փոխարենը՝ դրանք շատ տարածված են եղել այլոց խոսքի մեջ, այդ վարքագիծը կարելի է, թերևս, վստահորեն որակել որպես լրագրողների կողմից «ավելի ապահով դիրք գրավելու փորձ»: Երրորդ, հանդիպել են մի շարք գենդերային հիմքով ձևակերպված բառեր և բառակապակցություններ, որոնցից առավել տարածվածներն են՝ «հայ կին» և «տղամարդկային»՝ որոնք նշում են որևէ գործողություն կամ հատկանիշ, և որոնց վերլուծությունից պարզ է դառնում, որ դրանք՝ որպես բառեր հայերենում գենդերային պատկանելիության կոնկրետ ցուցիչի նշանակություն չեն ունեցել, այլ ձեռք են բերել այն այլոց բառերի հաճախակի գործածման և վերափմաստավորման հետևանքով: Բոլոր կարծրատիպերից և «կլիշեներից» հնարավոր կլինեն խուսափել միայն այն դեպքում, եթե լրատվամիջոցներն ունենային այլոց ուղղակի խոսքի փոխանցման խիստ կանոններ, որոնց միջոցով մի կողմից կապահովվեր խոսքի ազատությունը, իսկ մյուս կողմից կերաշխավորվեր, որպեսզի ՉԼՄ-ները չվերարտադրեն առկա կարծրատիպերը և դրանով իսկ չամրապնդեն դրանք որպես ընդունված հայեցակարգեր:

«Ես որբուկ եմ, ով ունի ծնողներ և ում մայրը ողջ է: Ես ինձ նետեց հավերժի խավար՝ անգամ չնայելով դեմքիս: Սակայն դու ավելի դժբախտ ես, քան ես. երբ դահճի դաշույնը կտրատում էր ինձ, մահացավ քո սիրտը, սակայն, դու դա չհասկացար: Դու գրկեցիր ինձ ոչ միայն կյանքից, այլև Աստծո Արքայությունից:»

««Մայրի՛կ, մի՛ սպանիր ինձ, մայրի՛կ, խղճա՛ր»: Սակայն դու չսեցիր քո սրտի բնակչին, և քո մայրական արգանդը դարձավ իմ կառափնարանը: Մա՛յր, ինչո՞ւ սպանեցիր ինձ, չէ՞ որ դու այդպիսի սուրբ և հրաշալի անվան կրողն ես: Երևի թե դու էլ չգիտեիր, թե ինչպես եմ սիրել քեզ, երբ մարմնովս մեկ էի քեզ հետ»:

Լրատվամիջոցներում կանանց քննադատությունից

³ Reuters Operational Guidebook, Section on Stereotypes and Value Statements, http://handbook.reuters.com/?title=Reporting_about_people

66. Ուսումնասիրված նյութերի ավելի քան մեկ երրորդում կարծրատիպային հայտարարություններում հանդիպել է «հայ կին» բառակապակցությունը: Այն գերակշռել է ինչպես ծավալուն, այնպես էլ հակիրճ ձևաչափով բոլոր թեմաներում: Բառակապակցության նշանակությունը պարզելու փորձից պարզ է դարձել, որ «հայ կինը» ընտանիքի հենասյունն է և խնամքի գլխավոր երաշխավորը: Նա իր ուրույն տեղն ունի ընտանիքում՝ տան օջախի մոտ, իսկ այն դեպքերում, երբ նրա համար տեղ է գտնվում հասարակության մեջ, նրա մասին խոսվում է հոգատարության և ուշադրության ոճով: «Հայ կինը» գեղեցիկ է, խոնարհ, հնազանդ և նրբազգաց, իսկ այն դեպքերում, երբ կինը շեղվում է այդ ընդունված շրջանակից, «հայ կնոջ» կարգավիճակը վիճարկվում է. մի շարք լրատվամիջոցներում հանդիպող նյութի հերոսներից մեկը հակադարձել է, որ «հայ կինն այդպես չի բղավի»: «Հայ կնոջ» հիմնական առաքելությունը մայրանալն է, որը մեծ տարածում ունեցող հասկացություններից է և համարվում է սրբություն և «աստվածատուր պարզև»:

67. Լրագրողները վերարտադրել են կյիշեները այլոց խոսքը մեջբերելու միջոցով, հատկապես՝ այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում էր տղամարդկանց: Ընդհանուր առմամբ, լրագրողների կողմից մեջբերված հատվածներում տղամարդիկ կանանց համեմատ նշվել են գրեթե 3 անգամ ավելի հաճախ: Ընդ որում՝ տղամարդկանց վերաբերյալ մեջբերված գրեթե բոլոր հատվածներում կամ առնվազն կեսում քննարկումը հիմնականում ծավալվում էր առնականության, դրա դրսևորումների և հատկանիշների շուրջ: Չնայած դրան՝ ի թիվս այլոց, առնականությունը ներկայացվել է խիստ կարծրատիպային ձևով: Առավել հաճախ հղում են կատարել առնականությունն ամբողջացնող հայեցակարգին՝ տղամարդկությանը, հատկապես այն դեպքերում, երբ քննարկման կիզակետում գտնվող որևէ անձ իր արարքներով գրեթե կորցնել է այդ հատկանիշը: Այլ դեպքերում առնականությանը բնորոշ հատկանիշը մեջբերվել է որպես «տղամարդու քայլ» անելու կոչ: Բավականին տարածված կյիշեներից էր նաև «տղամարդկային» բառի գոյական ձևը, որը հիմնականում կապել են գենդերային առումով չեզոք բնույթի այնպիսի բառերի հետ, ինչպիսիք են՝ արարք, խոստում, պատասխանատվություն, համաձայնություն, բանավեճ, իշխանություն, քննարկում, ճաշկերույթ, արժանապատվություն և անգամ երեկույթ: Առավել հաճախ են գործածվել «տղամարդու խոսք», «տղամարդկանց բանավեճ» և «տղամարդկային արժանապատվություն» բառակապակցությունները, թեպետև նյութերի գերակշիռ մեծամասնության դեպքում դրանք ներկայացվել են չակերտներում որպես մեջբերում: Բացի այդ, հանդիպել են տղամարդկանց և «տղամարդու արարքին» նույնացվող և կապվող բայական ձևեր: Առավել հաճախ են հանդիպել հետևյալ բայերը՝ գործել, արտահայտել, բանակցել, խոստանալ, համաձայնության գալ (գործարք կնքել): Կրկնվող համատեղ գործածման արդյունքում այս գոյականները և բայերը գենդերային պատկանելիություն նշելու առումով չեզոք խոսքի մասերին ժամանակի ընթացքում հաղորդել են գենդերային պատկանելիության որոշակի հատուկ երանգ, և նման բառերը վերատպելով՝ լրագրողներն ամրապնդում են այդ կյիշեները, որոնք նյութի սյուժեի զարգացման և լրատվական նյութ

«Ես մի բան գիտեմ՝ այսօրվա դրությամբ «մայր» հասկացությունը բոլոր տղամարդկանց համար սրբություն է, և չեմ կարծում, որ որևէ մեկն իրեն թույլատրի նման հայիոյանքներ»:

«Հայ կնոջ համար ամենաբարձր կոչումը եղել ու մնում է **մայրությունը**»:

«Բնությունը կնոջն է պարզևել **մայրանալու** մեծագույն շնորհը, որը հնարավորություն է տալիս մեզ՝ շրջապատող աշխարհում անընդհատ առնչվել աստվածային արարման բերկրանքին»:

«**Հայ կինը** եղել ու մնում է ավանդական հայ ընտանիքի կայունության անսասան հենասյունը: Ամենածանր պահերին կրելով բոլոր դժվարությունները՝ նա սատար է կանգնել ամուսնուն, հորը, եղբորն ու որդուն՝ դրանով դառնալով մեր ժողովրդի հարատևության երաշխիքը»:

«Կյանքում շատ մեծ է կնոջ դերը, հատկապես **հայ կնոջ** դերը՝ որպես մայր, բույր, կին... Առհասարակ, առանց կնոջ տղամարդիկ դժվար թե կարողանային լուրջ հաջողությունների հասնել, նվաճումներ ունենալ: Կինն ամեն ինչ է տղամարդկանց համար...»:

«Կարճ հագնելը ամոթ է, հասկանում ես, տղամարդու շավվարը, որ **կնիկմարդը** հագնում է՝ ամոթ է: Չնայած գրված է, որ աշխարհի վերջին օրերին կանայք պիտի կուսությունից դուրս գան, նոր ամուսնանան, տղամարդիկ պետք է ստորանան կանանց դեմ, այդպիսի բաներ են գրված»:

Լրագրողների վերատպած մեջբերումները կանանց մասին

կազմելու տեսանկյունից որևէ գործառույթ չեն կատարում՝ ի վնաս տարբեր սոցիալական խմբերի:

Եզրակացություն

68. ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի զեկույցում Հայաստանում տվյալ խնդրի շրջանակմանը հաջորդած երեք ու կես տարվա ողջ ընթացքում ընտրված էլեկտրոնային լրատվամիջոցներում քննարկվել են պտղի սեռի ընտրության, պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների և տղա երեխայի նախապատվության խնդիրները: Լրագրողների կողմից լուսաբանվող քննարկումները մեծամասամբ կրել են բավական դրական և չեզոք բնույթ: Խնդրի բացասական շրջանակմամբ հողվածների մասնաբաժինը բավականին փոքր էր: Այս իրավիճակը կարող էր պայմանավորված լինել հետևյալ գործոններով՝ ա) լրագրողների մեծամասնությունը կանայք են, բ) խնդրի ձևակերպումը որպես ոչ միայն սեռական պատկանելության հիմքով երեխային կյանքից զրկելու՝ մարդու իրավունքներին առնչվող խնդիր, այլև՝ որպես ազգային նշանակության խնդիր, և գ) այն փաստը, որ տվյալ խնդրի կիզակետում երեխան է: Լրագրողական հետաքննության դեպքեր չեն արձանագրվել, ավելի շուտ՝ խնդիրը ձևակերպվել է և այնուհետև վերարտադրվել հարցի վերաբերյալ գիտելիք ունեցող այլ հիմնական շահագրգիռ կողմերի միջոցով: Լրագրողները հիմնականում ներկայացվել է հարցի միայն մի կողմը և հազվադեպ են հարցականի տակ ամել այլ շահագրգիռ կողմերի պնդումները կամ հակադրվել դրանց: Հղիության արհեստական ընդհատման իրավունքի կողմնակիցների կամ հակառակորդների կարծիքները չեն ներկայացվել այն ծավալով, ինչ խնդրի ժողովրդագրական և բժշկական հետևանքները դիտարկող փորձագետների կարծիքները: Թեև խնդիրը վերհանելուց բացի՝ լրատվամիջոցները ներկայացրել են նաև դրա հնարավոր լուծումները, տարբերակները դիտարկելու նկատմամբ բավականին պահպանողական մոտեցման պատճառով հնարավոր լուծումների թվում գերակշռել են վերարտադրողական առողջապահության ծառայությունների մատուցման ընթացակարգի խստացմանն ուղղված լուծումները, ինչի արդյունքում անտեսվել են ավելի ծավալուն լուծման տարբերակները, որոնց թվում կարող է լինել գենդերային պատկանելիությանն առնչվող կարծրատիպային ակնկալիքների կարգավորումը և խորապես արմատավորված մշակութային իմաստների փոփոխությունը: Բացի այդ, այլ շահագրգիռ կողմերի ուղղակի խոսքի մեջբերումը կարգավորող կանոնների բացակայության պատճառով հենց ՉԼՄ-ները վերածվել են առկա կարծրատիպերը և կլիշեները վերարտադրող միջոցների: Ընդհանուր առմամբ, ստեղծվել է այն տպավորությունը, որ ուսումնասիրված ՉԼՄ-ները հանդես են գալիս ոչ թե որպես ժողովրդավարական պետությունում քննարկման գործընթացը վերահսկող դերակատարներ, այլ ավելի շուտ՝ որպես խոսույթային տիրույթ: Ներկա իրականության պայմաններում միկրո մակարդակի դերակատարները հաջողությամբ ընդօրինակել են մակրո մակարդակում պահպանողական մոտեցմամբ շրջանակված հայեցակարգը և այն ներկայացրել իրենց գիտելիքի և մտադրության լիակատար համապատասխանությամբ՝ հաշվի առնելով դիտավորությամբ կիրառվող ճանաչողական և նորմատիվ չափանիշների թերությունը, որոնք լիարժեքորեն կիրառված լինելու դեպքում կնպաստեին հանրության կողմից խնդրի բոլոր կողմերի ամբողջական ուսումնասիրությանը, ինչը, թերևս, չի հաջողվել:

Առաջարկություններ

69. Ընտրված Էլեկտրոնային լրատվամիջոցների վերլուծությունից պարզ է դարձել, որ միջին (ինստիտուցիոնալ) և միկրո (անհատական) մակարդակներում անհրաժեշտ է ձեռնարկել պետական քաղաքականության մի շարք համապատասխան գործողություններ և միջոցառումներ:
70. **Մշակել քաղաքականության փոփոխության կարիք ունեցող ոլորտներում հանրային կարծիք ձևավորողների հետ աշխատելու ռազմավարություններ:** Ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ իրազեկվածության վրա հիմնված կարծիքների փոխանակման գործընթացը կարող է Էսկան ազդեցություն գործել ՉԼՄ-ների կողմից խնդրի լուսաբանման կազմակերպման վրա: Քաղաքականության համապատասխան միջոցառումներ մշակելիս վերլուծական կենտրոնները և այլ ՔՀԿ-ները պետք է ձգտեն այս կամ այն դեպքի համար մշակել հիմնավոր հաղորդակցության ռազմավարություն: Այսինքն՝ այդ ռազմավարության շրջանակներում պետք է մշակվեն և պարբերաբար լրատվամիջոցներին ներկայացվեն մի շարք գործիքներ, որոնց միջոցով կերաշխավորվի լրագրողների կողմից այս կամ այն թեմայի ճիշտ և համակողմանի լուսաբանումը:
71. **Չարգացնել հանրային կարծիքի ձևավորման գործում առաջատար դերակատարների՝ քաղաքականության փոփոխությանը միտված ազդեցիկ հիմնավորումները ձևակերպելու կարողությունը:** Էլեկտրոնային լրատվամիջոցների ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ այն դեպքերում, երբ այս կամ այն խնդրի շրջանակում ամկա չէ տվյալ հասարակությունում, և ներկայացվող գաղափարը ձևակերպվում է մշակույթում արմատացած շրջանակներում և ներկայացվում է հավասարակշռված ձևով՝ հարցի երկու հակադիր բևեռների կարծիքների արտահայտումից խուսափելու համար, ՉԼՄ-ները հակված են դիտարկելու և ավելի մանրազնին ուսումնասիրելու տվյալ խնդիրը՝ այդ թվում ծայրահեղ հակառակ կարծիքները, լրագրողական ոճի և մշակույթի թուլատրելի սահմաններում: Ռազմավարական առումով շատ կարևոր է ՉԼՄ-ների ներկայացուցիչներին տրամադրել խնդիրը լուսաբանելու համար անհրաժեշտ գրավիչ գիտելիքներ և զարգացնել նրանց համապատասխան հմտությունները: Ուստի՝ ՔՀԿ-ները կարող են մշակել ծրագրեր և (կամ) ուսումնական ձեռնարկներ կարծիքի ձևավորման գործում առաջատար դերակատարների համար՝ անհրաժեշտ հմտություններ ձեռքբերելու գործում նրանց օգնելու համար:
72. **Իրականացնել տեղեկատվական արշավ պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների վերաբերյալ:** Ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ մարդու իրավունքների տեսանկյունից խնդիրը լիարժեքորեն չի ուսումնասիրվել, և զարմանալի չէ, որ քաղաքականության փոփոխության հիմքում դրվել է այս ոլորտում բժշկական գործունեության լրացուցիչ կարգավորումը: Այդուհանդերձ, առնվազն մեկ տղա երեխա ունենալու ցանկության նախադրյալը հանդիսացող սոցիալական նորմերի հիմքում ընկած են նման վարքագիծը խթանող կարծրատիպերը: Պտղի սեռի ընտրությունն անհնար է վերացնել քաղաքականության պարզ միջամտությամբ, եթե այդ կարծրատիպերը շրջանառվում են հասարակության մեջ և վերարտադրվում ՉԼՄ-ների միջոցով: Կառավարությունը պետք է լուծի խնդիրը սոցիալական փոփոխությանն ուղղված ակտիվ քարոզարշավ նախաձեռնելու միջոցով՝ հատկապես թիրախավորելով կարծրատիպերը և նպատակ ունենալով փոփոխել տարածված համոզմունքները: Խիստ ցանկալի է նաև համագործակցել լրագրողների հետ, քանի որ նրանք այն հիմնական դերակատարներն են, ովքեր վերարտադրում են հայաստանյան հասարակության լայն զանգվածների կողմից ընդունված կարծրատիպերը:
73. **Կազմել պտղի սեռի ընտրության խնդիրը լուսաբանող ՉԼՄ-ների անհատական նկարագրերը:** Առկա տվյալների բազան թույլ է տալիս կազմել պտղի սեռի ընտրության խնդիրը լուսաբանող ՉԼՄ-ների անհատական նկարագրերը հետևյալ նպատակներով՝ վերհանել ոչ հավասարակշռված, կարծրատիպային մոտեցման կողմերը, ինչպես նաև պարզել, թե որքանով էր ուսումնասիրված խնդիրների շրջանակը բնորոշ տվյալ լրատվամիջոցին, այդ թվում՝ առանձին լրագրողների գրելու ոճերը: Այսպիսով, վերլուծական կենտրոնները կարող են օգնել ՉԼՄ-ներին բարելավել իրենց գրավոր խոսքի հմտությունները

և մշակել ներքին կանոններ, որոնք կնպաստեն բացահայտված խնդիրների աստիճանական վերացմանը և կերաշխավորեն, որպեսզի տվյալ լրատվամիջոցը վերածվի դերակատարի, այլ ոչ թե մնա լրատվության հարթակ, որտեղ գերիշխող դիրք են զբաղեցնում այլ դերակատարները:

74. **Մշակել իրավական կարգավորումներ ՉԼՄ-ների որակի հսկողության պարտադիր ներքին մեխանիզմների մասին:** Շատ կարևոր է ապահովել, որպեսզի ՉԼՄ-ները հանդես գան որպես խոսքի ազատության երաշխավոր, և այս առումով Կառավարությունը պետք է պատասխանատվություն ստանձնի՝ ապահովելու ՉԼՄ-ների կարգավորիչ կարողությունը և այդ դերը կատարելու պահանջը: Ավելին, խոսքի ազատության կրող լինելու դերակատարության վերլուծության արդյունքում պարզ է դարձել, որ որոշ դեպքերում լրատվամիջոցներն ավելի շատ են լուսաբանել արտոնյալ խմբերը՝ դրանով իսկ անուղղակիորեն նվազեցնելով բոլոր համապատասխան շահագրգիռ կողմերի՝ հանրային խոսույթին մասնակցելու հնարավորությունը: Ընդ որում՝ խիստ ցանկալի կլիներ օգնել ՉԼՄ-ներին բոլոր շահագրգիռ կողմերի հավասար և ներկայացված մասնակցությունն ապահովելու համար անհրաժեշտ բոլոր մեխանիզմները մշակելու գործում: Ուստի, ՉԼՄ-ների աշխատանքը կարգավորող օրենսդրությունը վերանայելու քաղաքականության տարբերակների լրացուցիչ ուսումնասիրության արդյունքում ՔՀԿ-ները Կառավարության հետ համատեղ և ՉԼՄ-ների հետ սերտ համագործակցությամբ կարող են առանց լրատվության ազատությունը և խոսքի ազատությունը երաշխավորելու պատասխանատվության սահմանափակման վերանայել կարգավորող օրենսդրությունը՝ որակի մասին հաշվետվողականության և ՉԼՄ-ների կողմից կարգավորվող որակի հսկողության մեխանիզմներ ներդնելու նպատակով:
75. **Մշակել առաքելությանն առնչվող ռազմավարություններ և կազմել լրագրողների համար նախատեսված մանրամասն ուղեցույցներ:** Թեև սույն հետազոտության շրջանակներում այս հարցը չի վերլուծվել, կարող է անհրաժեշտություն առաջանալ, որպեսզի լրատվամիջոցները վերանայեն իրենց նախանշված խնդիրները և նպատակը՝ դրանք այնպիսի գործառնական ընթացակարգերի և կանոնակարգերի հետ հստակ կապելու համար, որոնք կարելի է ներկայացնել լուրերի կազմման և հաղորդման ոճի և ուղեցույցների տարբեր ձեռնարկներում: Նման վերանայման արդյունքում թիրախ խումբը հստակ պատկերացում կկազմի հռչակված և պահպանվող արժեքները պահպանելու համար տվյալ լրատվամիջոցի կողմից կիրառվող նորմատիվ շրջանակների մասին:
76. **Մշակել աշխատանքին զուգընթաց անցկացվող ներքին վերապատրաստման դասընթացներ և կարողությունների զարգացմանն ուղղված պրակտիկաներ:** Վերլուծության արդյունքում արձանագրվել է լուրերը լուսաբանելու ձևը և տվյալ կազմակերպության կողմից լուսաբանման արժանի համարվող իրադարձությունները բացահայտելու հմտությունները բարելավելու համար անհրաժեշտ հստակ ինստիտուցիոնալ ուղեցույցների բացակայությունը, ինչը, ի թիվս այլ հետևանքների՝ մեծապես վտանգում է խնդիրների վրա հանրային ուշադրությունը հրավիրելու չեզոք և անկողմնակալ միջոցները: ՉԼՄ-ները կարող են քննարկել իրենց լրագրողների և հատկապես՝ իրենց վերջերս միացած լրագրողների համար աշխատանքին զուգընթաց անցկացվող ներքին դասընթացներ, քննարկումներ, մենթորինգ (փորձի փոխանակման միջոցով երիտասարդ մասնագետների ուսուցման միջոց) և կարողությունների զարգացմանն ուղղված այլ միջոցառումներ կազմակերպելու տարբերակները:
77. **Նախաձեռնել որակի հսկողության ներքին մեխանիզմների մշակումը:** Որակի հսկողության գործող ներքին մեխանիզմները, թերևս, շատ թերզարգացած են: Լիարժեք մեխանիզմների միջոցով հնարավոր կլիներ հեշտությամբ վերհանել այն լրատվական նյութերը, որոնք, ի թիվս այլոց, միակողմանի են, հազեցած են ավելորդ մեջբերումներով, կասկածի տակ չեն դնում պնդումները, չեն ներկայացնում շրջանակմամբ ձևակերպված այս կամ այն խնդրին առնչվող հեռանկարների ամբողջ ծավալը և պատկերացում չեն տալիս տվյալ խնդրի ընդհանուր վիճակի և պատմության մասին: Այս ամենից ելնելով՝ անհրաժեշտ է ՉԼՄ-ների ներկայացուցիչների հետ համատեղ և նրանց շրջանում նախաձեռնել որակյալ լրատվության անկախությունը երաշխավորող որակի հսկողության ներքին մեխանիզմների մասին բանակցությունները և դրանց մշակումը:

78. **Մշակել ոճի մասին ձեռնարկի և էթիկայի ուղեցույցների շարունակական թարմացման և գործածման մեխանիզմ:** Խոսքի և տեղեկատվության ազատությունը հարցականի տակ չառնելով հանդերձ՝ հետազոտության արդյունքները փաստում են, որ հրապարակվող նյութերը ոճի և էթիկայի տեսանկյունից ստուգելու ինստիտուցիոնալ գործառնությունից առկայության պարագայում այդ նյութերը կա՛մ կիսմբագրվեին մի շարք առումներով, կա՛մ էլ դրանց հրապարակումն առհասարակ կբացառվեր: Սրանից բխում է ժամանակի ընթացքում ոճի մասին այնպիսի ձեռնարկ և բառացանկ կազմելու անհրաժեշտությունը, որոնց միջոցով հնարավոր կլինի ողջամիտ կերպով համաձայնեցնել լրագրողական մասնագիտական տերմինները՝ առանց լրատվության ազատության անհարկի սահմանափակման: Նման ձեռնարկի և բառացանկի առկայությունը կարող է օգնել դերակատարներին գերծ մնալ որոշակի խմբերի մեկուսացմանը և առնվազն նրանց գործունեության չարդարացված սահմանափակմանը հանգեցնող կարծրատիպերի և կլիշեների անհարկի վերարտադրումից:
79. Ներքին վերապատրաստման դասընթացներին զուգահեռ անհրաժեշտ է նաև ապահովել լրագրողների համար կազմակերպությունից դուրս անցկացվող դասընթացներ: Խմբագրական կազմի և լրագրողների համար նախատեսված ուղեցույցների և ձեռնարկների մշակմանը զուգահեռ՝ կարելի է կազմակերպել աշխատանքին զուգընթաց տարբեր դասընթացներ, օրինակ՝ կարճատև այցելություններ Հայաստանում և Հայաստանից դուրս գործող այլ գործակալություններ, կարճաժամկետ դասընթացներ, կարողությունների զարգացման հանձնարարություններ, կարճաժամկետ թեմատիկ դասընթացներ, որոնք կօգնեն լրագրողներին գործնական հմտություններ ձեռքբերել խնդրի լուսաբանման ոլորտում և պարզել տարբեր վայրերում ընդունված լուսաբանման հիմնական նմանությունները և տարբերությունները: Այդ դասընթացները կօգնեն լրագրողներին նաև բացահայտել նյութի պատշաճ լուսաբանման հիմնական նվազագույն պահանջը, որը ոչ մի դեպքում տեղեկատվության ազատության սահմանափակում չի համարվում:
80. Լրագրության դասընթացներ առաջարկող համալսարաններում և այլ բարձրագույն ուսումնական հաստատություններում պետք է իրականացվեն բարեփոխումներ, առաջատար փորձի հիման վրա համեմատական վերլուծություն և ծրագրային հավատարմագրում: Դասընթացների կապակցությամբ, թերևս, անհրաժեշտ է վերանայել լրագրության դասընթացների ուսումնական ծրագրերը, ինչպես նաև վերապատրաստման դասընթացներ և այցելություններ կազմակերպել այդ ծրագրերի շրջանակներում դասավանդող մասնագետների համար: Աջակցության շրջանակներում կարելի է նաև օգնել համապատասխան մասնագիտական ուսուցում առաջարկող բուհերին այդ դասընթացների ծրագրային հավատարմագրումն իրականացնելու գործում:

Գրականություն

1. Գրիգորյան, Լ, Ղալումյան, Ա, Ե Ադամյան, Ս. (2012). Կնոջ կերպարը հայաստանյան գովազդում. Բաց հասարակության հիմնադրամ.
2. Գևորգյան, Ս, Ե Ղանթարյան, Է. (2010). ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉԼՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՄԲ. Լրատվամիջոցների մոնիտորինգի վերլուծական հաշվետվություն (Թ Հովնաթանյան, Ed.). Երևան, Հայաստան.
3. Giovanna Maiola, Michael Meyer-Resende, Regulation of Mass Media Activities during Elections
4. Marek Mračka (MEMO 98) and Richard Carver (Oxford Brookes University/Oxford Media Research), Monitoring Moldovan Broadcasters: Methods and Techniques
5. Bacchi, C. L. (2009). The issue of intentionality in frame theory: The need for reflective framing. In E. Lombardo, P. Meier, & M. Verloo (Eds.), The Discursive Politics of Gender Equality. Routledge
6. Benford RD, Snow DA. Framing processes and social movements: an overview and assessment. Annual Review of Sociology. 2000; 26:11-39.
7. Burman, E., and Parker, I (Eds.), Discourse Analytic Research, London: Routledge
8. Chilton, P., and Schaffner, C (Eds.). 2002. Politics as Text and Talk: Analytic Approaches to Political Discourse. Amsterdam: John Benjamins
9. Creed, W.E.D., Langstraat, J.A., and Scully, M.A. 2002. 'A Picture of the Frame: Frame Analysis as Technique and as Politics'. Organisational Research Methods. Vol. 5. No. 34. pp. 34-55
10. Cyver Alert, Media Monitoring: The Complete Guide: Everything You Wanted to Know About Media Monitoring, But Didn't Think to Ask
11. D'Angelo P. News framing as a multi-paradigmatic research program: a response to Entman. Journal of Communication. 2002;52(4):870-88.
12. Dombos, T. et al. 2009. 'Critical Frame Analysis: A comparative methodology for the QUING project'. Paper delivered to the ECPR First European Conference on Politics and Gender, January 21-23, Queens University, Belfast
13. Entman, R.E. 1993. 'Framing: Toward clarification of a fractured paradigm'. Journal of Communication, Vol. 43, No. 4, pp.51-58
14. Fairclough, N. 1995. Critical Discourse Analysis: the critical study of language. London: Longman
15. Ferree, M. M., Gamson, W. A., Gerhards, J., & Rucht, D. (2002). Shaping Abortion Discourse: Democracy and the Public Sphere in Germany and the United States. Cambridge University Press
16. Gerhards, J. 1995. 'Framing dimensions and framing strategies: contrasting ideal and real-type frames'. Social Science Information, vol. 34, no. 2, pp. 225-248
17. Goffman E. Frame analysis: an essay on the organization of experience. London: Harper and Row, 1974
18. Goffman E. Frame analysis. Cambridge: Harvard University Press, 1974.
19. Goffman E. Presentation of self in everyday life. New York: Doubleday, 1956.
20. Gonos, G. 1977. "Situation" versus "Frame": The "interactionist" and the "structuralist" analyses of everyday life'. In American Sociological Review, Vol. 42, pp. 854-867
21. Hallahan K. Seven models of framing: implication for public relations. Journal of Public Relations Research. 1999;11(3):205-42.
22. Johnston, H. 1995. 'A Methodology for Frame Analysis: From Discourse to Cognitive Schema'. In H. Johnston and B. Klandermans (Eds.), Social Movements and Culture. Abingdon: Routledge
23. Jorgensen, M., & Phillips, L. J. (2002). Discourse Analysis as Theory and Method. London, Thousand Oaks, New Delhi: SAGE Publications.
24. Levin, I.P., Schneider, S.L., and Gaeth, G.J. 1998. 'All frames are not created equal: A typology and critical analysis of Framing Effects'. Organizational Behaviour and Human Decision Processes. Vol. 76, No. 2, pp.149-188

25. Li, L., Wu, X. (2010). Gender of Children, bargaining Power, and Intrahousehold resource Allocation in China. *The Journal of Human resources*, University of Wisconsin
26. Lippmann, W. (1922). *Public Opinion*. New York: Macmillan
27. Nerlich, B. and Clarke, D.D. 1988. 'A dynamic model of semantic change'. In *Journal of Literary Semantics* Vol. 17, No. 2, pp. 73-90
28. OECD. (2014) *Social Institutions and Gender Index Synthesis Report*
29. OECD. *Women and men in OECD countries*, at www.oecd.org/dataoecd/19/14/38172488.pdf
30. Okada, M. 2006. 'Speaker's sex or discourse activities? A micro-discourse-based account of usage of non particle questions in Japanese'. *Language in Society*, Vol. 35, pp.341-365
31. Pearson E. *All the World Wide Web's a stage: the performance of identity in online social networks*. *First Monday*. 2009;14(3):1-7.
32. Pirkis, J., Blood, W. R., et al. (2008). *The Media Monitoring Project: Changes in media reporting of suicide and mental health and illness in Australia: 2000/01 – 2006/07*. Canberra, ACT: Commonwealth of Australia.
33. Rendahl, S. (1995). *Frame Analysis: From interpersonal to mass communication*. Paper presented to Central State Communication Association, Indianapolis, IN.
34. Scheufele, D. *A Framing as a theory of media effects*. *Journal of Communication*. 1999;49(4):103-22.
35. Snow DA, Benford RD. *Clarifying the relationship between framing and ideology in the study of social movements*. Unpublished.
36. Tamboukou, M. 2008. 'A Foucauldian Approach to Narratives'. In Andrews, M., Squires, C., and Tamboukou, M. (Eds.) *Doing Narrative Research*. London: Sage
37. Titscher, S., Meyer, M., Wodak, R., and Vetter, E. 2000. *Methods of Text and Discourse Analysis*. London: Sage
38. UKRAINE: *Monitoring of media coverage of Internally Displaced Persons* (pp. 1-13, Rep.). (2015). Ukraine: Thomson Foundation.
39. UNFPA (2012) *Report: Prevalence of and Reasons for sex-selective abortions in Armenia*. Yerevan: Armenia
40. Van Dijk, T. 1993. 'Principles of critical discourse analysis'. *Discourse and Society*, Vol. 4, pp. 249-283
41. Wodak, R. 1989. *Language, Power and Ideology: Studies in Political Discourse*. Amsterdam: John Benjamins

Հավելված 1. Մոնիտորինգի ընթացքում կիրառված հարցերը

- 1) Արդյո՞ք լրագրողը/լրատվամիջոցը պահպանում է լրատվության հավասարակշռված լինելու սկզբունքը, նյութը սենսացիոն չէ, երբ խոսվում է սեռի ընտրության-սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների-ծնելիության-տղա երեխայի նախընտրության (ՍԸ-ԱԸ-ՇՆ-ՏՆ) մասին: Արդյո՞ք լրագրողները ՍԸ-ԱԸ-ՇՆ-ՏՆ նյութի վերլուծականը ներառում են, առավել խորը հայացք են ձևավորում հարցի, մասնավորապես դրա առավել խնդրահարույց հարցերի շուրջ, թե փորձում են ավելի պահպանողական ու ապահով դիրք գրավել:
- 2) Արդյո՞ք առանձին մարդկանց պատմությունները ինքնանպատակ են, թե ավելի մեծ պատկերի մասն են կազմում:
- 3) Արդյո՞ք լրագրողները/լրատվամիջոցը վեր է հանում միայն ՍԸ-ԱԸ-ՇՆ-ՏՆ հիմնախնդիրը, թե փորձ են կատարում հանրային ֆորում ստեղծել մի քանի՝ ընտանեկան, համայնքային ու հասարակական մակարդակներում և ուղղված են լուծելու խնդիրը:
- 4) Արդյո՞ք լրագրողները/լրատվամիջոցը փորձում է ստեղծել հեղինակային նյութեր, թե վերատպում կամ վերարտադրում է այլ ՉԼՄ-ների նյութերը: Արդյո՞ք այլ ՉԼՄ-ներից նյութերը մեջբերելիս լրագրողները հետևում են աղբյուրի նյութի տրամաբանությանը, թե նախընտրում են հատվածական ծածկույթ ապահովել:
- 5) Արդյո՞ք լրագրողները փորձ են կատարում այս կամ այն կողմի օգտին հարթակ ձևավորել, թե նյութը հավասարակշռված ու օբյեկտիվ բնույթ ունի:
- 6) Արդյո՞ք լրատվամիջոցը փորձ է կատարել ներառելու հարցի վերաբերյալ առկա հակընդդեմ կարծիքներն ու դիրքորոշումները ՍԸ-ԱԸ-ՇՆ-ՏՆ վերաբերյալ:
- 7) Արդյո՞ք լրագրողը/լրատվամիջոցը պետական պաշտոնյաների մեջբերումներին և/կամ տվյալներին հակադրում է քննող հարցեր: Արդյո՞ք փաստերի ստուգում իրականացվում է:
- 8) Արդյո՞ք լրագրողը/լրատվամիջոցը պահպանում է ՍԸ-ԱԸ-ՇՆ-ՏՆ տերմինաբանությունը:
- 9) Արդյո՞ք լրատվամիջոցը կարողանում է տարբերակել վերարտադրողական ընտրությունը խտրականությունից:
- 10) Արդյո՞ք լրատվամիջոցը կարող է զանազանել բժշկական պատճառները ոչ բժշկականներից:
- 11) Արդյո՞ք լրատվամիջոցը/լրագրողը ակնհայտորեն չի ներառել տվյալ հարցի շուրջ առկա այլ հակընդդեմ դիրքորոշում ունեցող դերակատարներին: Արդյո՞ք կարելի է պնդել, որ սա միտումնավոր օրինաչափություն է:
- 12) Արդյո՞ք նկատելի էին հնարքներ, որոնք նման է կողմնակալության, մանիպուլյացիայի կամ խեղաթյուրման դրսևորումներին: Արդյո՞ք գործածված լուսանկարները կամ այլ գրաֆիկական պատկերները ներկայացնում են նյութի առարկան և չեն գործածում վիզուալ հնարքներ:
- 13) Արդյո՞ք առկա են ոչ ճշմարտացի, խեղաթյուրված կամ կանխակալ պնդումներ կանանց կամ տղամարդկանց վերաբերյալ:

a. Արդյոք լրագրողը պնդում է կատարում, որը փաստերով հիմնավորված չէ:

b. Արդյոք լրագրողի շարադրանքում կամ նկարագրության մեջ առկա է սեռի գերակայություն կամ սեռի կարծրատիպավորում:

Նշեք հատվածը

c. Արդյոք լրագրողը որպես փաստ ներկայացնում է մեկ ուրիշի կողմից ներկայացվող համանման պնդում:

d. Արդյոք լրագրողի շարադրանքում կարելի է նկատել արբորտ կատարած կանանց և/կամ նրանց ընտանիքի հանդեպ հարձակում :

14) Արդյո՞ք գործածված լեզուն ու կանխակալության կամ էլ ոչ ճշմարտացիության ելևէջներ:

Արդյո՞ք լրագրողը/լրատվամիջոցը գործածում է որոշակի դրական կամ բացասական բառեր այս կամ այն սեռի ներկայացուցչին նկարագրելիս:

արական -

իգական -

Հավելված 2. Լրագրողների ցանկ

Կայքի անվանումը	Լրագրողի Անունը
Aravot.am	<ol style="list-style-type: none"> 1.Նեյլի Բարայան http://goo.gl/hj6Pvl 2.Էյա Յովհաննիսյան http://goo.gl/3TiFJE 3. Յոհիսիմե Չերեջյան http://goo.gl/pcNXSG 4. Անի Եղիազարյան http://goo.gl/EzSmZM 5.Տաթև Հարությունյան http://goo.gl/78ASEh 6. Արմեն Պետրոսյան http://goo.gl/M7XHTS 7. Արամ Աբրահամյան http://goo.gl/rwyFPT http://goo.gl/tB9JUN 8.Բավական Ավիցարյան http://goo.gl/0xjVyc 9.Նազենի Բաղդասարյան http://goo.gl/sQ0KY6 10.Անուշ Բուլղադարյան http://goo.gl/j79FSk 11.Լուսինե Բուդաղյան http://goo.gl/cPVusJ 12.Աշոտ Հակոբյան http://goo.gl/v4hq8m 13. Յովհաննես Իշխանյան http://goo.gl/RH8ED0 14.Ամի Զիչակյան 15.Մարիամ Ավետիսյան http://goo.gl/yxOEnU 16.Սելանյա Բարսեղյան http://goo.gl/aWk3n 17. Սիրանուշ Հայրապետյան http://goo.gl/JyU16p 18.Պերճուհի Գևորգյան http://goo.gl/L6DW7X 29.Աշոտ Բարսեղյան http://goo.gl/RgSHxV 20.Լուիզա Սուքիասյան http://goo.gl/zpUj1q
Civilnet.am	<ol style="list-style-type: none"> 1. Միեր Արշակյան http://goo.gl/xht1XB 2.Սյուզաննա Յովհաննիսյան http://goo.gl/nvA2lz 3. Սեդա Գրիգորյան http://goo.gl/1bePWo 4. Արմեն Գրիգորյան http://goo.gl/M8uKFW 5. Դերենիկ Մալխասյան http://goo.gl/UskWJm 6. Գեղամ Բաղդասարյան http://goo.gl/jix0EF
Galatv.am	<ol style="list-style-type: none"> 1.Փայլակ Ֆահրադյան http://goo.gl/RJTJVY 2. Վարդուհի Արզումանյան http://goo.gl/7tGXF7 3. Արմինե Վարդանյան http://goo.gl/L1QZAf 4. Հերմինե Մկրտչյան http://goo.gl/RO6kR7 5. Լյուդմիլա Գարեգինյան https://goo.gl/7kOn1L 6. Քրիստինա Մկրտչյան https://goo.gl/0yz5qM

	<p>7. Համիկ Մելիքսեթյանը https://goo.gl/PPLErp 8. Արման Բաղդասարյան https://goo.gl/dZFQqf 9. Արմինե Վարդանյան https://goo.gl/ZM98py 10. Արաքս Մամուլյան https://goo.gl/VSoxH7 11 Չառա Ղազարյան https://goo.gl/LEr9fT 12. Դերենիկ Սալիսայան https://goo.gl/mYD4K2</p>
<p>Hetq.am</p>	<p>1.Արմինե Ղուկասյան http://goo.gl/4xKPJJ 2.Գայանե Սարգսյան http://goo.gl/BRVWDI 3. Աննա Շահնազարյան http://goo.gl/5yfWfR 4. Էմմա Պետրոսյան http://goo.gl/JRPAOi 5. Աննա Մուրադյան http://goo.gl/NXxPMz 6. Արման Ղարիբյան http://goo.gl/vN3E86 7. Լիանա Սայադյան http://goo.gl/sptPMK 8. Մերի Մամյան http://goo.gl/KxTNIE 9. Քրիստինե Աղալարյան, Գրիշա Բալասանյան http://goo.gl/STvZj7 10. Դանիել Իոաննիսյան http://goo.gl/z0feVm 11. Սուսաննա Շահնազարյան http://goo.gl/IXB9pJ 12. Անի Հովհաննիսյան http://goo.gl/oqxSzu 13. Երանուհի Սողոյան http://goo.gl/OikvNk 14. Մակար Ղազարյան http://goo.gl/Gwj9wq 15. Սամվել Ավագյան http://goo.gl/YXGNPy 16. Արմինե Ղուկասյան http://goo.gl/obXcp6 17. Երանուհի Սողոյան http://goo.gl/wmuCj5 18. Լարիսա Փարենուզյան http://goo.gl/Dr4Vig 19. Մանե Գրիգորյան http://goo.gl/If4bLx 20. Նաիրա Գևորգյան http://goo.gl/D0oKBw 21. Արման Ղարիբյան http://goo.gl/Ogr0q8 22. Գոհար Աբրահամյան http://goo.gl/1gyxG1 23. Սամվել Ավագյան http://goo.gl/1tt4U1 24. Սեդա Գպրանյան-Մելքոնյան http://goo.gl/pzIsnP 25. Անի Հովհաննիսյան http://goo.gl/QKDqZA 26. Գայանե Սարգսյան http://goo.gl/DJIpSn 27. Տաթև Խաչատրյան http://goo.gl/HVrbm8 28. Նաիրա Գևորգյան http://goo.gl/s3aYTc</p>
<p>Hraparak.am</p>	<p>1.Սյուզան Սիմոնյան http://goo.gl/xQN0q5</p>

	<p>2. Անահիտ Սահակյան http://goo.gl/ijg07k</p> <p>3. Հասմիկ Բաբաջանյան http://goo.gl/oqllfL</p> <p>4. Գայանե Սարիբեկյան http://goo.gl/hAPOBj</p>
lin.am	<p>1. Անուշ Ամիրբեկյան http://goo.gl/TQQxuN</p> <p>2. Սոսէ Բաղդասարյան http://goo.gl/142LJE</p> <p>3. Հայկանուշ Թորոսյան https://goo.gl/Af7dRz</p> <p>4. Անի Գևորգյան https://goo.gl/Jv1oyI</p> <p>5. Արամ Ամատունի https://goo.gl/8FGezg</p> <p>6. Սոնա Հարությունյան https://goo.gl/y8VmrJ</p> <p>7. Սիրանուշ Պապյան https://goo.gl/v0L5Qk</p> <p>8. Արմինե Ավետյան https://goo.gl/vHTnhY</p> <p>9. Արման Բաբաջանյան https://goo.gl/kW8T6h</p> <p>10. Չանի Հարոյան https://goo.gl/bnngpd</p> <p>11. Սոսէ Բաղդասարյան https://goo.gl/DoZR95</p> <p>12. Արթուր Հովհաննիսյան https://goo.gl/MZxqzs</p>
Lragir.am	<p>1. Ռոզա Հովհաննիսյան http://goo.gl/CQ7EOz</p> <p>2. Շուշան Ղահրիյան http://goo.gl/9FgfYG</p> <p>3. Հայկազն Ղահրիյան http://goo.gl/xKaZA2</p> <p>4. Մարի Ներսեսյան http://goo.gl/IDRGTI</p> <p>5. Կարինե Իոնեսյան http://goo.gl/NloLIC</p> <p>6. Հակոբ Բաղայան http://goo.gl/8wIPfV</p> <p>7. Արա Հարությունյան http://goo.gl/JyG4Xk</p> <p>8. Նաիրա Հայրունյան http://goo.gl/X2NfID</p> <p>9. ՀԱԿՈՒԲ ԲԱԴԱԼՅԱՆ http://goo.gl/sqqZmp</p> <p>10. Հայկ Կոնջորյան http://goo.gl/7aTbga</p> <p>11. Լևոն Մարգարյան http://goo.gl/M5bpU5</p>
Mediamax.am	<p>1. Սիրանուշ Եղիազարյան http://goo.gl/YiGe5l</p> <p>2. Եկատերինա Պողոսյան http://goo.gl/JbGSSj</p> <p>3. Մարի Թարյան http://goo.gl/4Alorx</p> <p>4. Լենա Գևորգյան http://goo.gl/8icqP</p> <p>5. Գոհար Նալբանդյան, Հասմիկ Բաբայան http://goo.gl/ItCDbS</p> <p>6. Վանեսի Վարդանյան http://goo.gl/Lw29re</p> <p>7. Արա Թադևոսյանը http://goo.gl/rP2sa2</p> <p>8. Լենա Գևորգյան http://goo.gl/FTK4Fs</p> <p>9. Արամ Մարգարյան</p>
News.am	1. Էմմա Օ.

	http://goo.gl/x2jrsv 2. Ամադս http://goo.gl/RqJyVh
Panarmenian.net	-/-
Panorama.am	1. Լիա Խոջոյան http://goo.gl/2rDV3E 2. Հասմիկ Հակոբյան http://goo.gl/2oCYnG
Tert.am	-/-
Times.am	-/-
Yerkir.am	1. Ա. Կ. https://goo.gl/qVFPWz 2. Աստղիկ Կարապետյան http://www.yerkir.am/news/view/65945.html 3. Կարինե Հարությունյան http://www.yerkir.am/news/view/58263.html 4. Գևորգ Ավչյան http://www.yerkir.am/news/view/56622.html 5. Թագուհի Մլընյան http://www.yerkir.am/news/view/50470.html 6. Մելանյա Մելքունյան http://www.yerkir.am/news/view/57088.htm 7. Լ. Սարգսյան http://www.yerkir.am/news/view/63566.html 8. Սեյրան Հանոյան http://www.yerkir.am/news/view/63553.html 9. Կարինե Հարությունյան http://www.yerkir.am/news/view/63550.html 10. Հովիկ Աֆյան http://www.yerkir.am/news/view/82165.html 11. Գևորգ Աղաբաբյան http://www.yerkir.am/news/view/79778.html 12. Շուշանիկ Հակոբյան http://www.yerkir.am/news/view/60184.html
168.am	1. Տիգրանուհի Մարտիրոսյան https://goo.gl/2WNSSF 2. Օֆելյա Հովհաննիսյան https://goo.gl/mkoce3 3. Իրինա Յոյան https://goo.gl/6oGveL 4. Անի Եղիազարյան https://goo.gl/Nukpo8 5. Գայանե Խաչատրյան https://goo.gl/p4Pqdf 6. Արա Գալոյան https://goo.gl/tjX3zn 7. Արաքս Մարտիրոսյան https://goo.gl/Glov8j 8. Լուսինե Ստեփանյան https://goo.gl/Aw0KOB 9. Նվարդ Մանվելյան https://goo.gl/6XxqI6 10. Ավետիս Բաբաջանյան https://goo.gl/bQnM0I 11. Արմինե Վարդանյան https://goo.gl/SWgV06 12. Հռիփսիմե Ջերեջյան https://goo.gl/h2NRRE 13. Սմբատ Արունյան https://goo.gl/vFa735 14. Լիլիթ Ավագյան https://goo.gl/nr76xZ 15. Ռազմիկ Մարտիրոսյան https://goo.gl/yun8v4 16. Մարիամ Աղիկյան https://goo.gl/ro5x1G 17. Ամալի Խաչատրյան https://goo.gl/M4c4Ig 18. Աստղիկ Իսկանդարյան https://goo.gl/pO9qas

	<p>19. Անի Գարուզյան https://goo.gl/yD2gw8</p> <p>20. Անի Քեշիշյան https://goo.gl/QB1cRn</p>
--	--